Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

420

8
h - 90

# ԱՆԱՊԱՏՈՒՄ

(Վ. Օ. ՀՕՐՆԻ.)

*Թարգմանեց*

ՕՐ. ՆՈՒՆԷ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ։

'Ի ՏՓԽԻՍ

Ի տպարանի Յովհաննու Մարտիրոսեանց

1878

891. 71-3
Հ-86

# ԸՆԵԳԱՏՈՒՄ

(Վ. Օ. ՀՕՐՆԻ.)

*Թարգմանեց*

ՕՐ. ՆՈՒՆԷ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ։

ԳՐԱԴԱՐԱՆ

'Ի ՏՓԽԻՍ

Ի տպարանի Յովհաննու Մարտիրոսեանց

1878

14 JUN 2013

420

Дозволено цензурою 21 Октября 1878 года

Типографія И. Мартиросіанца на Орбеліановской улицѣ д. № 5.

12 NOV 2009
30 SEP 2006

## ՅԱՌԱՋԱԲԱՆ։

Վերջին տարիներս կարծես մեր ազգը քնած տեղից սթափուեց։ Ոմանք կամենում են ազգային գործքերի մէջ խառնուել—ազգին օգուտ տալ իւրեանց կարողութեան և կամեցածին չափ, այդպէս մէկը իւր հարստութեան մի ամենափոքր մասով ուսումնարաններին է ձեռնհաս լինում, օգնում, միւսը մեռնելով մի բաւական գումար է կտակում այս կամ այն ուսումնարանին, երրորդը իւր քրտնաթոր աշխատութեամբը մի ուսումնարանում դասատուութիւն է անում կամ կառավարում է, որովհետև մեր փրկութիւնն ուսման մէջն է տեսնում, չորրորդը մատենադարանն է հարստացնում իւր կարողութեանը չափ. և այլն և այլն։

Այս վերջերս կարծես դարևոր փոշին իրանցից թօթափեցին մի երկու օրիորդ, իրանց պարտականութիւնը սկսում են ճանաչել, հնութիւնը ոտի տակ տալով և իրանց լուման ազգիս աղքատիկ գանձանակի մէջ ձգելով։

Վերջապէս մեր հնասէրներին ինչ կամենան թող ասեն, մենք էլ չենք կամենում այդպիսի ստր-

կութիւն տանել, որ վնասէ թէ մանաւորիս և թէ ընդհանրութեանը։

Մեր օրիորդների (տիկիններին չեմ ասում) մէջ կարծես ազգային կայծը մարել է, չեն տեսնում թէ օտար ազգերի մէջ կանայքըն ի՞նչ են անում, լաւը վատից չեն զանազանում, կարծես չեն մտածում թէ մենք էլ մեր մատենագրանը պիտի ունենանք ինչպէս ուրիշները. գոնէ օտարուհիները նրանց բարի նախանձն ամենևին չեն շարժում. կամենումեն միշտ ազգօգուտ գործերի մէջ անտարբեր մնալ, մասը չ՛խառնել։

Մեր հայախօս երեխայքը՝ օրիորդներն ու տղայքը, որոնք ռուսերէն ոչ կարդացածն են հասկանում և ոչ էլ խօսել գիտեն, եթէ դրանցից մէկը լինումէ 'ի բնէ հարցասէր, հետաքրքիր, արդեօ՞ք դրանց հետաքրքրութիւնը ի՞նչպէս պէտք է բաւականութիւն ստանայ։

'Ի հարկէ նրանց բաւականութիւն պիտի տալ մի որև է գրքոյկ ձեռքերը տալով, որ ամեն կողմից յարմարութիւն ունի։

Միայն այս ճշմարտութիւնը չպէտքէ ուրանալ որ վերջին ժամանակներն է, որ քանի մի երիտասարդներ կամենում են այդ ցաւին դարման անել, իրանց թէ ինքնագիր շարադրութիւններով և թէ թարգմանութիւններով, բայց այնպիսի երիտասարդների



թիւն այնքան փոքր է, որ մատների վերայ կարելի է ցոյց տալ։

Վերջապէս ես ևս կամենալով մի որ և է բանով օգնել այդ պակասութեանը, թարգմանեցի «Անապատում» վէպը, և որովհետև առաջին թարգմանութիւնն է կ՛խնդրեմ մեր մեծապատիւ ազգակիցներին ներողամիտ աչքով նայել, որով դէթ ինձ վարձատրուած կ՛համարեմ։

Նունէ Տէր-Աստուածատրեան։

# ԱՆԱՊԱՏՈՒՄ։

## Ա.

Փարիզումը շատ տներ կան հինգ յարկանի և մինչև անգամ աղքատ բնակիչներով լի մինչև վերին յարկերը՝ մշակներն իրանց ընտանիքներով, աղքատ աստիճանաւորներով, չ՛ամուսնացած երիտասարդներով, մինչև անգամ ճարտարապետներով։ Այսպիսի տունը կազմում է մի առանձին աշխարհ։ Մարդիկ շատ են, բայց համարեա միմեանց չեն ճանաչում. որովհետև բնակիչներն անդադար փոխվում են։ Միայն մի մարդ գիտէ, որ պէտք է բոլոր բնակիչներին ճանաչել.—այդ մարդը դռնապանն է։ Նա բնակվում է դռան մօտի սենեակումը, տեսնում է իւրաքանչիւր դուրս և տուն անողին, ներս եկողին դուռը բանում է, իսկ դուրս գնացողի յետևից փակում է. նա բաւական գործ ունի, այնպէս որ գիշեր ցերեկ համարեա հանգստութիւն չունի։

Պիեր Ռենարը նշանակած էր դռնապան այսպիսի տան վերայ։ Այդ տունը Փարիզի արհեստաւորաց թաղերի մէկումը երկու նեղ, բաւականի աղտոտ փողոցների անկիւնն էր կազմում, և իւր հինգ

յարկերով բռնումէր Մանսարդի կարգը, ցած պատու-հաններով: «Մանսարդներ» անուանվում են տանիքի տակի սենեակները,—այնպէս որ նրանց առաստաղը թէքէ,—Մանսար ճարտարապետից, որն առաջին անգամ շինութեան գործադրութիւնը մտցրեց Փարիզ. յետոյ դրանց նմանն էր շինուեցան ուրիշ երկիրներում:

Պիեր Բենարը պիտի բաւականանար մի հատ սենեակով իւր կնոջ ու 10 տարեկան որդու հետ. այդ սենեակի մէջ միայն կարող էին տեղաւորուիլ մահճակալները, սեղանը, պահարանը և չորս աթոռը մի խոհանոցով որ սենեակի կէսից փոքր էր, որտեղ նորա կինը կերակուր էր պատրաստում փոքրիկ վա-ռարանի վերայ: Թէպէտ այդ ընտանիքն աղքատ վիճակի մէջ էր, սակայն շատ հարուստներից բաղ-դաւոր էր, այդ մարդու և կնոջ ուրախ և անհոգ կեանք անցկացնելովը: Նոքա ամենևին կարիք չ'զգի-տէին, որովհետև Բենարը դերձակ էր և կարկատում էր բոլոր բնակիչների շորերը և հետները լաւ յարա-բերութիւն ունէր: Մինչև անգամ նրանց մէջ բարե-կամ ունէր մի ժամանակ, բայց արդէն չորս տարի էր, որ նա մեռել էր:

Նա կօշկակար Կլենարն էր, որ բնակվումէր Մանսարդներից մէկի մէջ, ուր նրանից յետոյ մնաց կինը և որդին: Կլենարի այրին լաւ աշխատող կին էր. Բենարի կնոջ մեծ բարեկամուհին էր որ նորան



ծանօթացնելով բնակիչների հետ, կարում ու լուան-ում էր նրանց շորերը: Քանի մի տարի երկու ընտա-նիքը կենումէին միմեանց հետ մեծ բարեկամութեամբ և համաձայնութեամբ, մինչև որ վերջապէս այրին ևս վախճանուեցաւ, 'ի հարկէ երկար ժամանակ ան-չափ աշխատելուց, առանց փոքր հանգստութեան:

Թաղման օրը տան տէրն եկաւ, որ մի ագահ և ժլատ մարդ էր, ժողովեց մնացած բոլոր բաները սենեակի վարձը չը վճարելուն համար, և իւր ձեռ-քով փակեց Մանսարդը, չ'հարցնելով՝ թէ ո՞ւր պէտք է որբը մնայ: Խեղճ Րօբէրտն այդ ժամանակ, տխուր և քաղցած կանգնած էր սենեակի դռան մօտ, և որովհետև հարևաններն արդէն վաղուց գործի էին գնացել, ուստի նրան ոչ ոք չ'նկատեց:

Նա համարեա իւր հօրը չէր մտաբերում և այդ պատճառաւ նրա համար չէր ցաւում, բայց մօր մահը նորա համար սաստիկ հարուած էր, տեսնելով որ որբը միայնակ է սարսափը տիրեց նորան:

Երկար լալիս էր մինչև որ յոգնածութիւնեցը ընկաւ սառը յատակի վերայ և տեղն 'ի տեղը քնեց:

Պատուաւոր Բենարը, այս միջոցին, ասեղը ցցեց կարի մէջ և թողեց, վերցրեց մեծ ակնոցները, քթախոտը քաշեց, և ձեռքերը ծնկների վերայ դրեց նա էլ կարի սիրտ չունէր: Զննելով որ նա ջղային մարդ չէր, սակայն ագահ տան տիրոջ այն օրուայ

ացելութիւնը, անխիղճ սառնասրտութիւնը, որով նա խեղճ երեխային աղքատացրեց, այսպէս ասած, տանիցն աքսորեց, խղճին կեղծում պղտորեց նորա հոգին և շարժեց բարկութիւնը, տեսնելով որ գործը վճռա-ղապէս առաջ չէր գնում՝ այնուհետև սկսաւ հայհոյել իւր տան տիրոջը։ Նա չ'զգաց, որ բարկացած ժամանակ ծանր բռունցքով խփեց ընկուզէ սեղանին և քիչ էր մնում որ կոտրէր։

Վերջապէս նորա կինը չ'համբերեց, բացեց խոհանոցի դուռը և կանչեց ամուսնուն

— Պիեր, ի՞նչ ես կայծակի պէս որոտում։ Գուցէ կարծումես, թէ սեղանը մարմարիցէ, թէ՞ միտք ունիս ուրիշ նորը գնելու։

Պիեր Բենարը վախեցաւ կնոջ անսպասելի շփոթութիւնից, և չռած աչքերով դարձաւ դէպի նա այնպիսի ծիծաղաշարժ կերպարանքով, որ կինը չ'կարողացաւ ծիծաղը պահել։

Դու ճշմարիտ ես, Միշլին,—սորանով գործը չեմ առաջ տանիլ, միայն խղճումեմ ղկանքի համար։

Ծեր ժլատին հայհոյելն էլ մեծ բան չէ, շարունակեց բարի կինը,—ի՞նչու չ'հայհոյել, այդ նրան արժանի է։

Բայց ինձ բոլորովին ուրիշ հարց զբաղեցրեց նոյնպէս խոհարարի համար. Պիեր, Ռոբերտն ի՞նչ պիտի անէ, նա ծնողք չունէ։



Պիերը վեր թռաւ տեղից և գլուխը բարձրացրեց, աչքերը փայլեցին ուրախութիւնից և երեսը կենդանութիւն ստացաւ։

— Եթէ ես և դու մի խօսքի ենք, ասաց մարդը շփոթուած ձայնով,—ես կարծումեմ որ ամեն բան վճռած է։

— Քո միտքդ ի՞նչ է, հարցրեց կինը զգուշութեամբ։

— Ճշմարիտ,—հանգիստ շարունակեց Բենարը,—մենք աղքատ ենք, բայց Տէր Աստուածը մինչև այժմ զուրկ չէ թողել, և ուր երեքն են կշտանում, այն տեղ կ'կշտանան և չորսը. Ռոբերտն էլ վարքով փչացած երեխայ չէ և . . . .

Այո, այո, հէնց ես էլ այդ էի կամենում ասել, ուրախ ուրախ մարդու խօսքն ընդհատեց կինը և արագ—արագ մօտենալով գրկեց և համբուրեց նորա երեսը.—միայն թէ նա ո՞ւր է։

— Կարծեմ Ժակի հետ է, ասաց դռնապանը. հէնց այժմ րոպէին ներս մտաւ Ժակը։

— Որտեղ է՞ Ռոբերտը, քեզ հետ չէ՞, հարցրեց նրան հայրը։

— Ոչ, պատասխանեց երեխան զարմացած և երկիւղով յետոյ մտաբերեց զարմանալի բան.—զարմանալի բան, այսօր նրան դեռ ես չեմ տեսել։ Նա ինձ մօտ էլ չի եկել . . . . Այս ի՞նչպէս է եղել որ նրա մասին չեմ մտածել։

Ժակը վերև վազեց և մի քանի րոպէից յետոյ իւր հետ բերեց և Ռօբերտին, որին նա գտաւ կարկըտըր-ումը յատակի վերայ, անկդայանալուն մօտ:

Անքուն գիշերները, որ անցկացրել էր մօր դագաղի մօտ, և վերջին հարուածը մեծ ազդեցու-թիւն արին խեղճ երեխայի վերայ: Ժակը զգուշ-ութեամբ զարթեցրեց նրան, իսկ նա զարթնելով սաստիկ քաղց զգաց. օր ու գիշերից աւելի էր, որ ոչինչ չէր կերել:

Բարի դռնապանուհին շտապեց նրան կերակրել, նախ քան իւր ընտանիքին հասարակ ճաշ կպատրաս-տէր: Իսկ երեխան իւր քաղցը կոտրելով մնաց տխուր մտածմունքի մէջ: Նա այն հասակումն էր, որ կարօ-ղացաւ հասկանալ հարցի բոլոր նշանակութիւնը: «Ի՞նչպէս անեմ, ո՞ւր պիտի գնամ, մտածումէր նա: Բենարն իմացաւ միտքը և մի քանի տաք խօսքերով բացատրեց, որ պէտք է մնայ իրանց մօտ և Ժակի հետ կլինի ինչպէս հարազատ եղբայր: Ռօբերտը չափազանց ուրախացաւ, երեխայական հասակին յատուկ տրտմութիւնը շուտով ուրախութեան փոխ-ուեցաւ: Ինչպէս ամբողջ Ֆրանսիայում, այնպէս և Փարիզումը մինչև վերջին ժամանակներս չէր ընդուն-ուած աղքատ դասին միջոց տալու, որ գոնէ հիմնա-կան կրթութիւն ձեռք բերէ:

Միջոց ունեցողը կարող էր սովորել առանց փող



անկարելի էր: Այդպէս էլ Բենարը մտաբերեց որ մէկ ժամանակ ինքը սովորումէր, այդ պատճառաւ կամեցաւ երեխանցը կարդալ–գրել և հաշիւ սովո-րեցնել. իսկ գրել նա չէր կարող սովորեցնել, որով-հետև ինքը ևս չէր անցել այդ արհեստի սեամքից, նա հազիւ կարողանումէր իւր ազգն ու անունը գրել, այն էլ տգեղ տառերով: Երեխայքը, մանաւանդ Ռօբերտը ընդունակ և աշխատասէր էին: Նոքա խնդ-րեցին ծերունի քահանային որ կրօնի ուսուցման հետ պարապի և ուրիշ առարկաներով, և ուրախանումէին նրանց տրած արագ յառաջադիմութեան համար: Այսպէս անցաւ երկու տարի: Աբբան յաճախ լինու-մէր Բենարի տանը և խօսքը դարձնումէր իւր աշա-կերտների արհեստի ընտրութեանը:

Բայց նախ քան այդ հարցի վճռելը, բարի դռնապանը մեռաւ: Նորա կինը որդու հետ գնաց Օրլէան, որտեղ ունէր մեքենայագործ եղբայր, որ համաձայնեցրեց քրոջը իւր հետ ապրելու, իսկ Ժա-կին տուեց ուսումնարան:

Այրի կինը չկարողացաւ Ռօբերտին իւր հետ վերցնել, բայց Աբբան խոստացաւ նորա կեանքն ապա-հովել և կատարեց իւր խօսքը: Միմեանցից բաժան-ուելը շատ դժուար էր՝ երեքն էլ կարծեցին թէ յաւիտեան են բաժանվում: Աբբան առաջարկեց Ռօբերտին թամբ չինողի մօտ մնալ, միայն այն պայ-

մանով, որ այժմ չունենալով՝ անպատճառ պարտա-որուի երկու տարում, սովորածի վարձը վճարելու։ Ռոբերտը մտածեց, որ իւր աղքատութեան ժամանակ դորանից լաւը չի կարող գտնել, ուստի համաձայնեց։ Աբբտն աչքի տակն ունէր մի Օբեր անունով մարդու, որ ազնիւ և իւր գործը լաւ իմացող մարդ էր։ Նա տարաւ Ռոբերտին և ներկայացրեց արհեստաւորին, և այնպէս արաւ, որ երեխան շատ դուր եկաւ Օբերին։

— Կլինար, Կլինար, մտածմունքի մէջ ընկած երեք անգամ կրկնեց նա։—Ես շատ լաւ էի ճանաչում Ժակ Կլինարին։ Նա քո ազգականն էր։

Իմ հայրը մի եղբայր ունէր, որն այդպէս անուանվում էր, պատասխանեց երեխան։

— Ո՞ւնէր. միթէ նա այժմ կենդանի չէ. զարմացած հարցրեց թամբագործը.—Նա վիրաբոյժ է ամուսնացաւ իմ քրոջ հետ և . . . . . .

— Գնաց Եգիպտոս, ասաց Ռոբերտը. այն օրից նրա մասին ոչինչ չենք իմացել և դորա համար մեռած ենք կարծում։

— Ամենևին ոչ, ընդհատեց նրան Օբերը,—երբ Եգիպտոսի փաշան, Մեհմէտ—Ալին, իւր մօտ կանչեց երիտասարդ Ֆրանսիացիներին, նա էլ գնաց իբրև վիրաբոյժ. Մեհմէտ Ալիի և նորա որդի Իբրահիմի ժամանակը մեծ նշանակութիւն ստացաւ, մեծ ռոճիկ



էր ստանում և այժմ հանգիստ ապրում է Կայիրէ քաղաքումը, ինչպէս հարուստ մարդ։ Մանրամասնութիւնքը չգիտեմ, քոյրս նրա հետ ամուսնացաւ իմ ցանկութեանը հակառակ ուստի և միմեանց վերայ գրագրութիւն չենք անում։

Պայմանաթուղթը պատրաստ էր. միւս օրը Ռոբերտը գնաց թամբագործի խանութը, Սենտ—Անտուան արուարձանումը։ Նորա հօրեղբօր վերայ խօսք չկար, բայց Օբերը այդ բանը չհասկանալով, իւր պատմութիւնովը երեխայի հոգու մէջ կայծ զարթեցրեց, որ ոչինչ բան չկարողացաւ հանգցնել։

Աշխատելիս և ազատ ժամերին երազում և արթուն ժամանակ Ռոբերտը մտքով տեղափոխվում էր Կայիրէ իւր հօրեղբօր մօտ։ Նա մանրամասն ամենայն բան իմացաւ Եգիպտոսի ճանապարհի և արգելքների մասին, իսկ գլխաւորը՝ թէ այդպիսի ճանապարհորդութիւնը ի՞նչ կ'արժենայ. չնայելով վերջինը մեծ արգելք էր երևում, բայց այդ նա չարգելեց նորան չշինելու օդային ամրոցներ այն խնդրքի վերաբերութեամբ։ Կենդանի երևակայութիւնը մինչև այնքան էր գմայլեցնում, որ նա շատ անգամ ճշմարտութիւնը մոռանում էր, ընկնելով ցնորածի մէջ։ Նա անզգուշութեամբ անգամ և երեխայական պարզմտութեամբ պատմում էր ընկերներին իւր մտադրութիւնը, ցնորքներից և երազական յոյսերը։ Դժբախտ-

քար ընկերների մէջ կային այնպիսի անպիտաններ, որոնք բաւականութիւն էին ստանում նորա վերայ ծաղրելով: Սկսան կանչել Եգիպտացի,—փաշայ, Մէհմէտ—Ալի: Նրանց կատակը և վատ վարմունքը դէպի խեղճ Րոբերտը, նա անմեղ լինելով, երևեցաւ որ չէ կարողանում համբերել: Նա կատաղումէր, բարկանումէր, վատ էր սովորում իւր արհեստը և որովհետև փոքր ինչ էլ բարկացկոտ էր, ուստի բանն այնտեղ հասաւ, որ միանգամ ինքը և ընկերը միմեանց ծեծեցին: Այն վիրաւորիչ կատակները և վատ վարմունքները, որ փչացած երիտասարդներն անումէին, նորա անկեղծութիւնը և հաւատարմութիւնը փոխեցին, խաւարացրին նորա բնական բարի և քնքոյշ հոգին, բնութիւնը:

Րոբերտը շատ բարի և խելօք էր, չկարողանալով վերոյիշեալ յանդիմանութիւնները տանել, կամեցաւ տիրոջը դանգատուել. նա հասկանումէր, որ դրանով իւր դրութիւնը տասն անգամ կ'վատանայ, բայց որովհետև այլ ևս չէր կարող և չէր էլ կամենում այդպիսի կեանք ունենալ,—միայն բանն այնտեղ հասաւ որ շատ վհատեցաւ, ուստի մէկ գեղեցիկ առաւօտ անյայտացաւ, փախաւ առանց իւրան հաշիւ տալու, թէ ի՞նչպէս պէտի կառավարուի առանց միջոցի, առանց ազգականների կողմնակի օգնութեանը և առանց աշխատանքի:

1002
5225



Բնազդմամբ շտապեց նա Փարիզի կենդրոնը, այնտեղ, ուր մարդ հեշտ է կորչում այն խմբերի մէջ, որոնք զբաղուած են իւրեանց գործերով: Չէ կարելի ասել, որ նա չէր վախում. անկշռադատ քայլն արած էր և վերադառնալը, նորա կարծիքով, այլ ևս անկարելի էր:

Երկար ժամանակ թափառումէր նա փողոցներում, այս կողմ այն կողմ նայելով, թէ չէ՞ կարելի արդեօք իւր ծառայութիւնը մէկին առաջարկել, բայց յանկարծ նկատեց մէկ հիւրանոցի վերնագիր, որտեղից դուրս և տուն էին անում գլխաւորապէս նահանգներից եկած աղքատ ճանապարհորդներ և մուրացիկներ: Իսկոյն մտաբերեց, որ հիւրանոցի գլխաւորը՝ հանգուցեալ Րենարի լաւ բարեկամներիցն էր, որ յաճախ գալիս էր իրանց տուն, հետը քանի մի շեշ գինի վերցրած:

Օլիվէի այցելութիւնը նրանց երեխանց համար ուրախութիւն էր, որոնց հետ նա կատակ էր անում, խաղումէր և համարեա իւրաքանչիւր անգամ բերումէր քաղցրաւենիք:

Րոբերտը շուտով մտաւ հիւրանոցը և Օլիվէի համար հարց արեց: Նորան տարան խոհանոցը և իւր հին բարեկամին տեսաւ, որը նորա բաղդից շուտ ճանաչեց և գրկախառնեց նրան: Նա վերցրեց երեխային հետը տարաւ իւր փոքրիկ սենեակը, որ խոհանոցի կողքին էր: Այնտեղ սկսեց հարց ու փորձ

անել։ Ռոբերտը բոլոր հարցերին պատասխանում էր անկեղծօրէն և ճշմարտապէս։ Խոհարարը նորա համար սրտանց ցաւումէր, ուստի հարցրեց, թէ արդեօք ի՞նչէ կամենում անելու։ Այդ սարսափելի հարցը խեղճ երեխային անվճռելի էր երեւում, որ և չ'կարողացաւ արտասուքը պահել։

— Դորա մասին ես ոչինչ չ'գիտեմ, փոքր լռելուց յետոյ պատասխանեց նա։—Ես կ'կամենայի աշխատել, բայց ոչ-քի հարկաւոր չեմ, ոչնչի պիտանի չեմ։ Կ'կամենայի մի որ և է գործով պարապել,—բայց չեմ իմանում թէ, ի՞նչ անեմ։

Խոհարարը իւր փոքրիկ, կարմրաւուն և անպաշտ-պան բարեկամի դրութիւնից շարժուած, թիկն տալով սեղանի վերայ, ձեռքերով ծածկեց աչքերն ու ճա-կատը և ընկաւ մտածմունքի մէջ։ Վերջապէս ասաց.

— Լսի՛ր, հարուստ տան կամ հիւրանոցում խո-հարար լինելը—ամենևին վատ չէ։ Ձեռն կարող ինձ մօտ մնալ։ Եթէ կամենաս՝ վաղն էլ կարող ես։

Հենց «խոհանոց» բառը դիւթական կերպով ներգործեց երեխայի քաղցած փորին։ Մի քանի մանէթ-ներ որ հաւաքելէր, այն չնչին նուէրներից, որ երբեմն ստանում էր յանձնարարութիւն (заказъ) անող մարդկից, երբոր պատրաստած իրեղէնները տանումէր. նա պահեց ամենայ կարեւոր կարիքների համար, և ոչ մի սատօտ չ'գրաւեցաւ նոր թերած



շաքարով և իւղով ունցած հացի հոտից, բայց խո-հանոցի կերակուրների հոտը նորա ճաշակը բացարեց։

Է՛հ այստեղ ամենայն օր գոնէ կարելի կլինի կշտանալ։ Այն ձայնը, որով արտասանեց այս բառերը, խոհարարին ստիպեց զարմանքից աչքերը մեծ բանալու։

— Հապա, դեռ ես դու ոչինչ չես կերել, հարց-րեց նա, պատասխանի չսպասելով, վերթռաւ, վազեց խոհանոցը և մի րոպէից յետոյ վերադարձաւ և բե-րեց նախաճաշիկ. — Նստիր, ասաց նա, նախաճաշիր, մի՛ նեղանալ։ Խոհարարը կտրեց իւր ձեռքով մի մեծ կտորներ, և գուարճանում էր երեխայի քաղցր ուտելու վերայ։

— Եթէ իմ առաջարկութիւնն ընդունում ես կրկնեց խոհարարը, հենց այսօր կ'խօսեմ խոհանոցի տիրոջ հետ, թէ և գիտեմ, որ նա կ'համաձայնուի, որովհետև մեզ աշխատաւոր խոհարար է հարկաւոր։ Վաղը պատասխան կ'ստանաս, 'ի հարկ է, յաջող։

— Բայց այս գիշեր ո՞րտեղ պէտքէ քնէր։

— Այդ հարցն էլ քիչ չէր անհանգստացնում խեղճ երեխային։

— Հապա ի՞նչ պէտքէ անել, մտածումէր խոհարարը։

— Չնայելով որ շատ եմ կամենում օգնել, բայց 'ի հարկէ անկողինս չեմ կարող բաժանել քեզ հետ, որովհետև նեղ է, և տեսնումես, ես ինչպիսի մարդ եմ։

Ռոբերտը աչքի տակով նայեց նորա կարճ և հաստ կազմուածքին, և՛ ի հարկէ համոզուեցաւ որ նորա ասածը բոլորովին հիմնաւոր է:

— Այ ինչ կանենք՝ ուրախացաւ Օլիվիէն.— մինչև մութը փողոցներումը շրջիր. իսկ երբ կ՚մթնանայ, եկ ինձ մօտ ընթրիք արա և մի կառքում պառկիր քնիր, որ կանգնած են յարկի տակը — այժմ ամառն է, գիշերները տաք են հանգիստ կ՚քնես, իսկ առաւօտեան կգաս ինձ մօտ.

Բանն այսպէս էր վճռուած:

Ռոբերտը խոհանոցից դուրս եկաւ բոլորովին ուրիշ մարդու նման: Նա ոչ միայն կ՚շտացել էր, բայց և տխրութիւնը փարատուել էր: Այժմ յոյսն այնպէս լաւ երևաց, որ նա բաւականութեամբ զբօսնում էր և մինչև անգամ երգում էր: Փողոցի տեսակ տեսակ ժողովուրդը, կառքերը գեղեցիկ ձիաներով, մագազինների պատուհաններից երևեցող բազմատեսակ ապրանքները — այդ բոլորը նրան զրաւում էին, բայց շոգը անտանելի էր, ուստի մէկ տեղ պառկեց և այնպէս խորը քնեց, որ չիմացաւ թէ ինչպէս նշանակած ժամը հասաւ:

Բարի խոհարարը պատահեց Ռոբերտին սեամքի վերայ: Նա արդէն անհանգստանում էր, չ՚լինի թէ մոլորուած լինի, կամ թէ մի բան պատահած նորա հետ: Բայց երբ տեսաւ, որ գալիս է, գնաց առաջ և



ուրախութեամբ սեղմեց նորա ձեռքը և տարաւ իւր սենեակը, ուր պատրաստած էր նորա համար ընթրիք մի շիշ լաւ կարմիր գինով:

— Ամենայն բան իւր կարգին էր գնում, հանդիսաւոր կերպով նա Ռոբերտին յայտնեց, թէ դու կ՚մնաս այստեղ և հէնց վաղը շորերդ կը փոխես և խոհարարի շոր կ՚հագնես:

Քաղցած Ռոբերտը միևնոյն ճաշակով և ագահութեամբ սկսեց ուտել: Ընթրիքից յետոյ խոհարարը նորա հետ խօսելով գնաց մինչև կառքերի ծածկոցի տակը, և Ռոբերտին տեղաւորեց մէկ հին տեսակ շինած կառքի մէջ, որը կողքերից ծածկուած էր կաշեայ ծածկոցներով. բարի գիշեր ասաց նրան և հեռացաւ, խոստանալով առաւօտեան վաղ զարթեցնել:

Ռոբերտն իրան համար յարմար տեղ ընտրեց, պառկեց և իսկոյն քնեց, բայց շատ քաղցր ու խոր քնի մէջ սկսաւ խորթալ, որի պատճառը ոչ միայն յոգնածութիւնն էր, այլ և կարմիր գինին, որ նրա համար անսովոր ճոխութիւն էր:

Կէս գիշերն անցել էր: Ժամի երկուսին, կառքերի ծածկոցի ձախ կողմից կամաց գոմի դուռը բացուեցաւ, այնտեղից դուրս եկաւ մէկ կառավար, պռոշ տալով և ճլմկոտալով, — ձգձգուելով (потягиваться), տրորեց քնաթաթախ աչքերը, նայեց դէպի պարզ աստղալից երկինքը, և լաւ եղանակը հաւանելով՝

գլուխը երկու անգամ թափ տուեց համոզուելով, որ լաւ և պարզ օր է խոստանում, և մի անգամ ևս որոշ-տալով, կրկին մտաւ գոմը մթութեան մէջ անյայտացաւ։

Նա իր ձիաներին գարի տուեց ու կրկին դուրս գնաց՝ երկու վեդրօվ ջուր բերեց և ձիաներին խմացրեց, յետոյ երեսն ու ձեռքերը սապոնով ու ջրով լուաց, ծխափողը լցրեց ծխախոտով։

Այժմ առաւօտեան կարգերը յաջորդաբար վեր-ջացնելով, ձիաները դուրս բերեց և կամաց կամաց լծեց՝ հենց այն կառքումը, որի մէջ քաղցր քնում էր մեր բարեկամը, որին ոչ կառքի շարժուելը զարթեցրեց, ոչ ձայները, վերջապէս ոչ էլ անիւների և ձիա-ների սմբակների ձայները։ Երբ կառավարը լծեց վերջացրեց բաց արաւ դռները և քշեց դէպի քաղա-քի հիւսիսային ծայրը։ Ռոբերտը կամաց կամաց որորուելուցն աւելի խոր էր քնում։ Կառավարը մտաւ մեծ ճանապարհը թէ չէ, նա նոյնպէս սկսեց քնի մէջ խռթալ, թողնելով ձիաներին իրանց կամքին, որով-հետև իրանք արդէն սովորել էին այդ ճանապարհի վրայ մանգալը։ Ամենայն բան խաղաղ և կարգով էր գնում, երբ իր ժամանակին լուսացաւ և առա-ւօտեան հով քամին կառավարին զարթեցրեց, նոյն-պէս զարթեցրեց և նորա անծանօթին, որ կառքումն փակուած էր։

Ամէն մի մարդ կ'զարմանար այդ տղայի վրայ



երբ նա զարթնելով տեսաւ, որ ինքը կառքի մէջն է, որ ծանր առաջ էր գնում խճուղու վրայ, լսեց կա-ռապանի ուրախ երգը և մտրակելու ձայնը։ Նա քանի մի անգամ աչքերը տրորեց. կարծում էր թէ երա-զումն է։ Սակայն փոքր առ փոքր հասկացաւ իր վատ դրութիւնը և շատ վախեցաւ։ Կառքի յետին մասի պատուհանիցը նայեց և համոզուեց, որ Փա-րիզն իրան հեռուն է թողել և գնում է գիւղական անծանօթ գեղեցիկ արտերով։ Նա յուսահատուած՝ ձեռքերով երեսը ծածկեց թէ ինչ պէտք է անել արդեօք։ Լաւ էր իմանում, որ Փարիզի կառապանին ոչ մի կերպով չէր կարելի օրինաւոր մարդոց կարգը դասել, ուստի վճռեց որ լուռ նստի, որպէս զի չտես-նի, որ յետոյ կարողանայ օգուտ քաղել մի յարմար րոպէից, աննկատելի կերպով սողալ—և այն տեղից Փարիզ վերադառնալը դժուար չէ։ Նա մի բանից էր վախում—չէ՞ զրկուիլ արդեօք իր տեղից՝ հեռա-ցած լինելով այն տեղից, որ ապագայում իրան մեծ բան էր խոստանում, և այդպիսի դրութեան մէջ կ'գտնի արդեօք իրան յարմար գործ, նախ քան իր քանի մի սուն, որ կազմում էր ամբողջ դրամագլուխը՝ բոլորովին կ'սպառուի։ Սակայն այդ մտքերը, թէպէտ և տանջող էին, բայց նա լաւ համարեց բոլորից առաջ զբաղուել այն կենսական հարցի վճռելովը՝ թէ ի՞նչպէս ազատուի այն խղճալի դրութիւնից, որ

կարծես արգելուած լինէր բանտի մէջ:

Նորա բաղդից, դժուար վճռելի հարցը անըսպասելի կերպով շուտով և յարմար վերջացաւ: Թեանաւորուած կառքը երբ հասաւ կամրջին և սկսաւ շխկշխկալ, Բոբերտն սկսեց նայել կաշեայ ծածկոցների մէկ բացուածքով և համոզուեցաւ, որ քաղաք կամ գիւղ է մտնում: Մի քանի րոպէից յետոյ ձիաները կանգնեցին, կառապանն իջաւ և սկսեց ձիաներն արձակել և տանել գոմը: Վճռական րոպէն հասաւ: Բոբերտը վաղուց արդէն ուշադրութիւնը լարած, կառապանի ամենայն շարժմունքին ականջ էր դնում, նորա հեռանալուց օգուտ քաղեց՝ հաստատ գիտենալով, որ մօտիկ ոչ ոք չկայ, զգուշութեամբ յետ քաշեց ծածկոցը և նորա տակից դուրս թըռչելով, տեսաւ, որ փողոցումն է և միենոյն արագութեամբ ծածկոցը կրկին ամրացրեց: Որովհետև նա վերջացրեց այս փորձը ոչ այն կողմից, որն որ դարձրած էր դէպի հիւրանոց, այդ պատճառաւ տանիցը ոչ ոք նորան չնկատեց. երբև թէ ոչինչ չկար, և նա քայլերն այն կողմն ուղղեց, որտեղից որ եկել էր, մտածելով, թէ այն կողմը պիտի գնայ՝ Փարիզ վերադառնալու համար, որ կողմից եկել է:

Ճանապարհին հանդիպեց երկու մարդու, որոնք գնացել էին զբօսնելու, մէկը քաղաքացի վաճառական էր, իսկ միւսը—սպայ (офицеръ), որ նայելուց



50 տարեկան էր երևում, որ էր Աֆրիկական եգեր զօրքի գնդապետը: Բոբերտը քաղաքավարութեամբ գլուխ խոնարհեցրեց նրանց ու հարցրեց, թէ փարիզը հեռու է՞:

— Եթէ վեց ժամ լաւ մանգաս, որդեակ, հազիւ թէ հասնես, ցաւակցութեամբ պատասխանեց վաճառականը:

— Վեց ժամ, կրկնեց Բոբերտը, այնպիսի ձևով, որ երևում էր նրա երկիւղը—և այնպիսի շատ ժամանակ:

— Իսկ դու անշուշտ Փարիզ պիտի գնաս, հարցրեց վաճառականը:

— Ինձ այնտեղ սպասում են, այն ինչ ես ուշանում եմ:

— Հենց այդ միջոցին գնդապետը մօտ եկաւ և լսեց այդ բոլոր համառօտ խօսակցութիւնը վաճառականի հետ. երեխան նորան դուր եկաւ, նա բաւականութեամբ նայում էր նորա թարմ զուարթ երեսին, գեղեցիկ պատկերի վերայ, որ խոստանում էր անսովոր ոյժ և հմտութիւն: Այդպիսի բան զինուորականի աչքը լաւ է ճանաչում: «Եթէ փոքր ինչ մեծ էր եղել ասաց նա—լաւ եգեր դուրս կ'գար. ափսո՜ս որ երիտասարդ է և փոքր:

— Գնանք միասին, բարեկամ, ասաց գնդապետը բարձր ձայնով.—ես էլ այն կողմն եմ գնում, ճա-

նապարհը ցոյց կ'տամ քեզ։ Այն բարձր տեղը ճանապարհը երկու է բաժանվում, ուստի և հեշտ կարողես մոլորուել։

Այժմ առաջարկութեամբ բարի սպան կամենում էր իւր ցանկութիւնը յայտնել, բայց այդ մի հանելուկ էր երևում երեխայի և վաճառականի խօսակցութեան ժամանակ։

Ռօբէրտը շնորհակալութեամբ ընդունեց առաջարկութիւնն ու հենց սպայի առաջին խօսքերից սկսեց երեխայական կատարեալ պարզամտութեամբ իւր բոլոր պատմութիւնը նորան պատմել, սկսած իւր ծնողաց մահից, մինչև ներկայ դժուար րոպէն։ Գնդապետը լսեց նորան՝ սրտանց խղճալով, բայց չկարողացաւ ծիծաղը պահել վերջին անցքի, կառքով քաղաքից ծածուկ հեռանալը։ Գնդապետը երբ վերջապէս իմացաւ, որ նա մի քանի սանտիմից աւելի փող չունէր, բայց այնպէս քաղցած էր, որ մէկ ամբողջ Փրանկը չէր բաւականանալ, ուստի վճռողապէս յայտնեց։

— Այդպէս անկարելի է։ Այս շոգումը մի քանի ժամից յետոյ ուժից կ'ընկնես, դեռ մինչև առաջին գիւղը հասած, արի ինձ հետ։ Որովհետև շոգն արգելումէ գնանելու։

Նախ և առաջ նախաճաշիր, իսկ այնտեղ մնալու վերայ կ'խօսենք։ Նա յետ վերադարձրեց, իսկ



Ռօբէրտն էլ հետևեց նրան։

— Հը՛, ուրախ ես խոհարար դառնալու, գնդապետը ճանապարհին հարցրեց նրան։

— Ուրախ լինելով — ուրախ չեմ, պատասխանեց Ռօբէրտը, բայց իհարկէ մի կտոր հաց կ'ունենամ։

— Ուրեմն ուրիշ պատճառ չունե՞ս, հարցրեց գնդապետը։

— Էլ ի՞նչ պատճառ է հարկաւոր։ Ես միշտ կ'լինեմ իմ հօր տեղ ընդունած բարեկամիս մօտ. նա ինձ անկեղծ սիրում է, ոչ թէ միայն քաղցած չեմ լինիլ, բայց մինչև անգամ կ'ունենամ ապաստանարան և շոր։

— Բայց եթէ գտնուէին այնպիսի մարդիք, նոյնպէս քեզ անկեղծ սիրելիս, որոնք նոյնպէս կերակրէին քեզ, հագցնէին և քեզ հետ լաւ վարուէին՝ նրանց մօտ կ'մնայի՞ր։

— Ինչո՞ւ չէի մնալ, համարձակ և ուրախ պատասխանեց Ռօբէրտը։

— Ահա ինչ, բարեկամ, դու ինձ դուր ես գալիս. Նորերումս իմ ծեր ծառան մեռաւ, դու կարող ես նորա տեղը փոխանորդել, ամենայն բան պատրաստ, լաւ ռոճիկով, միայն դու պէտք է ինձ հետ Աֆրիկա գաս. Ալժիրում ձիաներս պիտի պահես։ Այդ բանի վերայ մտածիր ու ինձ պատասխանիր, համաձայն ես թէ ոչ։

— Իսկ այդ տեղը Եգիպտոսից հեռու է՞, անսովոր կերպով հարցրեց Ռոբերտը:

Գնդապետը ծիծաղեց, որովհետև ուրիշ տեսակ երևաց այդ անսպասելի հարցը:

Այսինքն թէ, ասաց նա,— Ալժիրը Եգիպտոսից մօտիկ է քան թէ Փարիզից, բայց նորա և Եգիպտոսի մէջ կայ ահագին անապատ և . . . . .

— Անապատն ի՞նչ բան է, հետաքրքրութեամբ հարցրեց Ռոբերտը, որովհետև առաջին անգամն էր լսում այդ բառը:

Գնդապետը մանրամասնաբար նկարագրեց Սահարան իւր տաքացած աւազով, այրող—չորացնող Սամումով, անչափ անջուր տարածութիւններով: Պատմելիս զարմացքից Ռոբերտը վեր էր թռչում:

— Սակայն, անապատն աւելի փոքր մի՛ ներկայացրու քեզ, աւելի քան թէ բնութեան մէջ գտնվում է, շարունակեց գնդապետը.—Նորա միջով իւրաքանչիւր տարի ամբողջ կարաւաններ են անցնում և ապահով հասնում Կայիրէ:

— Կարաւաննե՞ր, այս ի՞նչպիսի բաներ են, աւելի հետաքրքրուած հարցրեց Ռոբերտը:

— Գիտես, ժպտալով պատասխանեց նրան գնդապետը,— անապատումը քաղաքներ և գիւղեր չկան, ինչպէս Ֆրանսիայում.

Ուստի պիտի հետը վերցնել պաշար, ջուր,



գիշերելու համար վրաններ, ուղտաններ . . . .

— Այո՛, ես բնագիտական պարտէզում ուղտաններ եմ տեսել, ընդհատեց նորան Ռոբերտը.— և այդպէս բոլոր բաները նրանք են տանում:

—Այո՛, ճարտարը նոյնպէս: Բայց Սահարայի սահմաններում և բնակեցրած տեղերում բնակվում են վայրենի ցեղեր, որոնք ճանապարհորդներին են սպասում, որ նորանց վերայ յարձակուեն և յափշտակեն: Այդ և ուրիշ շատ վտանգներից պաշտպանուելու համար, օրինակ գիշատող գազաններից, մարդիկ միայնակ չեն ուղևորվում, այլ շատ մարդկերանցով և մի փոքր գունդ զօրքով.—և հէնց այդ անուանվում է կարաւան: Իւրաքանչիւր կարաւանի վերայ նշանակում են մի փորձառու զօրավար, որին բոլորեքեան պարտական են անպայման հնազանդուել, և մի առաջնորդ, որ լաւ գիտէ ճանապարհն անապատի միջով: Իսկ այժմ ինձ ասա, սկսեց գնդապետը կարճ լռութիւնից յետոյ,—ինչո՞ւ համար քեզ հետաքրքրումէն Եգիպտոսն ու Կայիրէն:

Ռոբերտը պատմեց բոլորը, ինչ որ լսել էր Օրբերիցը իւր հօր եղբօր մասին:

— Բայց, չէ՞ որ այդ բոլորը շատ վաղէ եղել, ասաց նա, երբ երեխան վերջացրեց.—և դու մինչև անգամ չե՞ս իմանում, թէ կենդանի է քո հօր եղբայրը թէ ոչ: Եթէ մեծ ներողութեամբ, վերջին կապեկները

ծախսելով, հասնես Կայէրէ և նորան կենդանի չգտնես, ի՞նչ կանես այն ժամանակ: Ես քեզ խորհուրդ կ՚տայի չափազանց չ՚յափշտակուել այդպիսի կասկածելի յոյսերով: Աշխատիր պատուաւոր և աշխատող մարդոց մէջ մնալ, այդ աւելի լաւ է, իսկ հնարածը դէպքին թող

Ռոբերտը շփոթուած լուռ կացաւ. նա չէր կարող սրտանց չհամաձայնել, թէ գնդապետի առածները արդարացի չեն: Նա գնում էր ոչ մի բառ անգամ արտասանելու, ինչպէս ջրի մէջը թողած, մինչև որ գնդապետը կանգնեց գեղեցիկ տների առաջ և ասաց. «Ա՛յ հասանք»: Մէկ րոպէում, բոլոր երևակայութիւններն անյայտացան, և նա մի առժամանակ բոլորը մոռացաւ, բացի քաղծիցը, որ հետզհետէ աւելանում էր:

Գնդապետը բաւականութեամբ նայում էր ինչպէս նա վերջացնում էր մէկ բաժինը, միւսն ուտում իր առողջ և սպիտակ ատամներով, և չէր գրաւում նորա խօսակցութեամբ. բայց երբ նորա խանդը նկատելի կերպով սկսեց թուլանալ, այն ժամանակ նորից դարձաւ իր առաջարկութեանը:

— Այս բանի համար, Ռոբերտ, ի՞նչ ես ասում: Կամենում ես ինձ հետ մնալ. քեզ համար լաւ կլինի, եթէ մնաս:

— Քաղցած փորով դատողութիւն տալն աւելի



ախորժելի է, ծիծաղելով ասաց Ռոբերտը, թող իմ բախտի խոհարարը իր կերակուրն եփէ, իսկ, ես, պարոն գնդապետ, ես կ՚մնամ ձեզ մօտ, մինչև այն ժամանակ, երբ դուք ինքներդ կ՚արտաքսէք ինձ ձեր տանից:

— Ապրես, դու չես զղջալ քո վճռի մէջ: Տեսնում եմ որ դու յիմար երեխայ չես, գովեց նորան գնդապետը:

Միևնոյն օրը, զօրքի դերձակը Ռոբերտի շորի չափը վերցրեց, որի պատառոտուած շորերին, ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում, բայց այժմ հագաւ եղերի գեղեցիկ շոր:

Որովհետև գնդապետը աշունքից վաղ չ՚պէտք դառնար Ալժիրիա իր գնդի մօտ, ուստի երեխային թողեց սովորելու, այնպէս որ պակաս գիտութիւնները լրացրեց և այդպիսով հիմք դրեց իր բաղդաւոր կեանքին: Նորա յառաջադիմութիւնները քիչ չէր ուրախացնում Գրանդէն բարի գնդապետին, որը միւս կողմից օրէ ցօր աւելի և աւելի էր կապվում նորա հետ՝ ազնուութեանը համար, բարեխղճութեամբ իր պարտականութիւնները կատարելումը, ծառայութիւնը և քաղցր բնաւորութիւնը, իսկ վերջապէս և նորա չափազանց սիրոյ համար դէպի ձիանները: Ձիու վերայ նստելն էլ գնդապետի ծեր ծառան էր սովորեցնում, Ժերարը, որ չնայելով փոքր ինչ դժգոհ սովորութիւն ունեցող մարդ էր, բայց մեծ զարմանք

և բաւականութիւն պատճառեց Գրանդէին, որ ոչ միայն լաւ չէր վարվում երիտասարդ Նորեկի հետ իբրև թշնամու կամ հակառակորդի դէմ, այլ նորան որտանց սիրեց և հայրական խնամքով զբաղուեց նորա դաստիարակութեամբ, մասամբ ծառայութեամբ և մասամբ ձիաներով։ Նորա մօտ Րօբերտը սովորեց ազնիւ կենդանիների հետ վարուել, նրանց բնաւորութեան ու յատկութեան համեմատ, և քանի մի շաբաթից յետոյ լաւ էր պահպանում Բերբերստանի ձիուն, չնայելով որ հին խաղաղներիցը չէր, գգվում էր նորան, ուտեցնում էր քաղցր արմատներ, հայրենի քաղցր կերակուրը, և իւր հետ սովորեցրեց այնպէս, ինչպէս շուն, այնպէս որ կարող էր հեծնել առանց սանձի, թէ որ ծերարը թոյլ տար։

Օրերն սկսեցին պակասել, մինչև որ Գրանդէն իւր գործերը կարգի բերեց, գնաց Փարիզ գնդի մէջը, որ ստանայ իւր կանոնագիրը և զբաղուի վերջնականապէս ճանապարհի պատրաստութեամբ։ Որովհետև գնդապետը երկար ժամանակ զինուորական մինիստրութեան մէջ էր և ամբողջ օրերով տուն չէր գնում, այդ պատճառաւ Րօբերտը նրանից թոյլտուութիւն խնդրեց այցելու իւր բարեկամ խոհարարին, որ խաղաղացնէ և արդարանայ նորա առաջ՝ անբաւական երևեցող վարմունքի համար։

Երբ Աֆրիկայի գեղեցիկ և զարդարուած



որսորդը կանգնեցրեց իւր գեղեցիկ ձին մեզ յայտնի հիւրանոցի դրան առաջ, ծառան գնաց հիւրին հանդիպելու՝ նորան մի որ և է մեծ մարդ ընդունելով. ձիապահն առաւ նորա ձեռքից ձին և երիտասարդ պարոնի խորհրդով սկսեց քայլով կամաց փողոցում ման ածել, իսկ անցորդները կանգնում էին գեղեցիկ կենդանուն տեսնելու։ Ծառայի զարմանքը որքան եղաւ, երբ «երիտասարդ պարոնը» գլխաւոր խոհարարից բնակարան խնդրեց։ Սակայն նոքա շտապեցին տարակուսելով, խոհանոցի մօտի մեզ ծանօթ սենեակը։

Բարի խոհարարն սկզբում իւր մանուկ բարեկամին չճանաչեց և երկար ժամանակ չէր հաւատում տեսածներին, նորան մեծ փոփոխութիւն էր երևում, բայց հաւատալով, որ ճշմարիտ այն Րօբերտն է, որ անպաշտպան կերպով կորած էր, շատ ուրախացաւ, որովհետև անհետանալու պատճառը չիմանալով չէր հանգստանում։

Բայց աւելի ևս ուրախացաւ, երբ մանրամասնաբար իմացաւ նորա կեանքի փոփոխութիւնը դէպի լաւը՝ թէ անցեալում և թէ ապագայում։ Խոհարարն առանց հրաւիրելու նորան չէր թողնիլ. նա սեղանը փառաւոր կերակուրներով բեռնաւորեց, և ամենալաւ գինուցը մի բաժակ խմեց Րօբերտի կենացը, յետոյ նորանից խօսք առաւ, որ գնալուց կրկին այցելի իրան.

Ռօբերտի հետ գնաց փողոցը, որ տեսնի թէ ի՞նչպէս է ձիուն հեծնում, որի գեղեցկութիւնն ու զարմանալի շարժուածքը նրան հիացրին:

Գնդապետն արդէն տանը Ռօբերտին սպասում էր: Երբ Ռօբերտը վերադարձաւ մանրամասն՝ հարցրեց նորա այցելութեան մասին ծեր բարեկամին. որովհետև գնալու օրը մերձենում էր, ուստի Ռօբերտը միայն միանգամ կարող էր տեսնել և մնաս բարև ասել. և այդ ժամանակ մի նամակ յանձնեց իւր բարեկամին, որ Օրլեան ուղարկի իւր ընկեր Ժակին և նորա բարի մօրը: Նա շատ էր ցանկանում նրանց տեսնելու, բայց գործ շատ ունէր, քիչ ժամանակ էր մնալու:

Վերջապէս գնդի բոլոր բաժանմունքները, որոնց գնդապետը Ալժիր պիտի տանէր մարմնամարզութիւն անելու յետոյ, գնացին Տուլօն, ուր նորան սպասում էին մի քանի շոգենաւեր:

Տուլօն տեղափոխութիւնը ծանր էր: Գնդապետը Ռօբերտին չէր թողնում հեռանայ, ամենայն բան ցոյց էր տալիս նորան, բացատրում էր ու բաւականութիւն էր զգում լուսաւորելու Երեխային, նորա գիտութեան և մտաւոր շրջանի բոլոր կողմերը ընդլայնելու: Եւ այս էլ պիտի ասել, որ Երեխան էլ ուշադիր և եռանդուն աշակերտ էր: Նորա մէջ զարթնում էր մեծ ցանկութիւն շատ և շատ գիտնալ—





ուժեղ ցանկութեամբ բորբոքուած նոր երևոյթներով, անդադար նորան ներկայացող բաներն այնքան էին հետաքրքրում և զարմացնում, որքան հեռանում էին մայրաքաղաքից դէպի հարաւ: Նա չէր հանգստանում հարցեր առաջարկելուց, իսկ բարի պարոնը չէր զլանում պատասխանելուց: Բայց երբ տեսաւ իւր առաջը ծով, լիքը զանազան տեսակ նաւերով՝ փոքր նաւակներից սկսած մինչև ահագին Ֆրեգատ, որի հիանալի շինութեան բոլոր մանրամասնութիւնները զննում էր նա.—Երբ գնաց նաւահանգիստը որտեղ անդադար բանում էին շատ մարդիք,—երբ նա իմացաւ, որ այդ տեղ կենում էին ամբողջ երկրագնդի բոլոր ազգութիւնների ներկայացուցիչները, —վերջապէս երբ տեսաւ հիւսիսի, արևմուտքի, արևելքի և հարաւի արդիւնքները, որ մեծ քանակութեամբ գալիս էին մի և նոյն ծովովը, նոյն նաւերովը—այն ժամանակ նորա առաջին, բառիս ճիշտ մտքովը, բացուեց նոր աշխարհ, նա զարմանում էր տեսնելով, որ ծովը սահման չունէ և նորա անվերջ հարցերը և անհագ հարցասիրութիւնը կարող էին շատերին ձանձրացնել և համբերութիւնից հանել, այո, շատերին, բայց ոչ բարի գնդապետին, որն անդադար պատասխանում էր նորա բոլոր հարցերին, համոզուելով, որ նա հասկացող գլուխ և նշանաւոր

մխիթարութիւն ունի, որովհետև ոչ մի խօսք, ոչ մի բացատրութիւն չէր կորչում։

Երբ վերջապէս շոգենաւը, սև թանձր ծուխ արձակելով իւր երկու ծխնելոյզներից մտաւ բաց ծովը, նորա սիրտը սաստիկ խփում էր, և նա իւր բոլոր հոգով գնում էր Աֆրիկայի անիմանալի և դիւթական երկրի հանդէպը։ Այժմ նա իւր համար լաւ կայք, իւր առաջ այնպիսի փայլուն ապագայ էր տեսնում, որ բոլոր հոգով հանգստանում էր, այնպէս որ համարեա մինչև անգամ գնդապետի խելացի և համոզիչ խօսքեր գործածելու հարկաւորութիւնը չունէր, որպէս զի հասկացնի այն մտքերը, որոնք նորա համար մի տեսակ հիւանդութիւն էին երևում. այն ժամանակ երբ նա իւր աղքատութեան և միայնութեան մէջ նայում էր իւր օդային ամրոցների վերայ ինչպէս միակ նպատակի վերայ, միակ կարելի ելքի վերայ, խեղճ ու անկարգ ապրելուց ազատուելու։ Այժմ նորան գրաւում էին, ոչ թէ այն օդային ամրոցները, որոնց ձեռնհաս լինելը նա վաղուց գիտէր. այն նոր աշխարհը, նոր կեանքը, որ նման չէին այն բոլորին որոնց մէջ մեծացել էր և տեսել։

Այժմ նա առաջուց ուրախանում էր այն բաների համար, որ պիտի տեսնէր։ Նա երևակայութեան մէջ էր. նորա կուրծքն ագահութեամբ ներշնչում էր



ծովային սառն օդը, աչքերը հիանում էին ընդարձակ տեսարանի վրայ։ Շոգենաւն աւելի և աւելի անցնում հեռանում էր ալիքների վրայովը, երբեմն վեր էր բարձրանում և երբեմն թաղվում էր ջրի մէջ. մեր երևակայողի սիրտն սկսեց բաբախել, և իրան սոխրակամից ծանր զգաց։ Նա իւր բոլոր ուժով նորան դէմ էր գնում, բայց որքան հեռանում էին այնքան անտանելի էր լինում. դառնում էր կիսք և այդ րոպէներում Ալժիրիան նորա համար հրաշալի երկիր էր երևում,—բոլոր արմաւները երկրիս վերայ եղած բեդուինները և «առած զարմած» հօր եղբօրը Կայիրում, որ իւր ոտների տակ տեսնի ամուր յատակ կամ քարէ յատակ և ոչ թէ այս կողմն այն կողմն շարժուող, տատանուող տախտակներ։ Գնդապետը վաղուց ծանօթ լինելով ծովային երևոյթների հետ, հենց սկզբից հեռուեց նորեկին և շատ դժուարութեամբ էր կարողանում ծիծաղը պահել, դիտելով նորա երեսի փոփոխութիւնը ուրախ արտայայտութիւնից, այնպիսի ծաղրաշարժ ցնորուած խեղճութեանը հահասած։ Վերջապէս սկսեց գլխացաւը։ Նա բռնեց երեխայի ձեռքից, որովհետև երկրի ոտի վերայ կանգնած չէր կարող համբերել, և տարաւ նաւասնեակը ականջումը քչփչալով։

— Մի վախիլ, Ռոբերտ, ոչինչ չ'կայ, միայն պարկիր քո մահճակալի վերայ և չ'վերկենաս Այդ, որ

գլուխը պտոյտ է գալիս, կոչվում է ծովային հիւանդութիւն։

Խեղճ երեխան միայն այժմ բոլորը մոռացեց ինչ որ լսել էր այդ քիչ վտանգաւոր հիւանդութեան մասին, բայց անհամբերելի դրութեամբ հնազանդուեց իւր բաղդին։ Նա պառկեց և պառկած էր համարեա անդադար մինչև Ալժիր, յետոյ քանի մի ժամի ընթացքում ուղղուեցաւ։

Բ.

Գնդապետը նախ քան իւր ծառայելու տեղը կերթար Ֆրանսիական երկրների սահմանի վերայ, պիտի քանի մի շաբաթ անցկացնէր Ալժիրում։ Այդ շաբաթների մասին Ռօբերտը պահում էր մի անջնջելի յիշատակ։ Նա պէտք է մի առ ժամանակ զրկուէր գնդապետի հետ խօսակցելուց, որ ամբողջ օրերը համարեա աշխատութեան հետևիցն էր նահանգապետի և գլխաւոր հրամանատարի կաբինետում, բայց եթէ երեկոյեան գալիս էր, այն ժամանակ էլ սպաների խմբի մէջն էր լինում. այդ պատճառաւ Ռօբերտը կարողանում էր բաւականի ժամանակ մանգալ ամբողջ քաղաքը, նաւահանգստից մինչև ամրոցը նայում էր մզկիթներին, բնակիչների շորերին, մանաւանդ տեսակ տեսակ փողոցները նորա համար չտեսած ապրանքներով և խանութներով և նրանց



մօտ ժողովված զանազան տեսակ ժողովուրդը, որ բաղկացած էին եւրոպացիներից, Թիւրքերից, արաբներից, նեգրներից՝ շատ էին հետաքրքրում։

Ամէն մի քայլում հանդիպում էր նոր—չտեսած բանի։ Այդ յիշողութեան արժանի օրերը նորա կեանքի վերայ մեծ տպաւորութիւն գործեցին։ Նա ունենալով սիրելի և անձնանուէր համաերկրացիներ՝ միշտ կարող էր իմանալ այն, ինչ որ կամենում էր իմանալ և թարգմանի կարօտութիւն էլ չէր զգում. այնպէս, որ ուսուցչի ներկայութիւնը նորա համար չափազանց զգալի էլ չէր, իսկ երբ գնդապետը երբեմն գիշերները ազատ րոպէներում հարցնում էր նորան թէ ինչպէս է օրն անցկացրել, միշտ բաւական էր մնում նորա պատասխաններով։ Անցնում էին այնպիսի օրեր, երբ Ռօբերտը զբաղվում էր գրքերի ընթերցանութեամբ, գնդապետի բերած, որը չէր մոռանում զանազան ճանապարհներով զարգացնել նորան։

Այսպէս մի քանի շաբաթ անցաւ մեծ բաւականութեամբ և օգուտով. Ռօբերտը բոլորովին մոռացաւ, որ առաջն ունէր տեղափոխութիւն։ Այդ միջոցին պատահեցաւ, որ յանկարծ Ալժիրիայի սահմաններիցը ապստամբական լուրեր եկան, դառնալով գործը կարգով էր գնում Ֆրանսիացիների բնակութեան յարմար։

Այդ շրջաններին համեմատ Տուարեկներն, ամե-
նից կատաղի և բազմաթիւ անհնազանդ ցեղերից
մէկը, որ բնակւում էին Սահարայի սահմանի օազիս-
ների վերայ, քանի մի անգամ յարձակուել էին այն
ցեղերի վերայ, որոնք Ֆրանսիացիների հետ դաշն էին
կապած. և ոչ միայն նորանց բոլոր կենդանիները
քշեցին, այլ և յափշտակել էին և գերի տարել
բազմաթիւ երիտասարդներ, կանայք, աղջիկներ, և
երեխայք, իսկ այն բոլորին, ով դէնքը ձեռքին դի-
մադրում էր, անխնայ կոտորում էին: Նոքա մեծ—մեծ
խմբերով անսպասելի ժամանակ յարձակւում էին, որ
ոչ ոք չէր կարողանում դիմադրելու պատրաստուել.
Նշանակում էր այդ ժամանակ պաշտպանութեան
յոյս չկար: Այս անցքը, բայց նշանաւոր կորստից յետոյ
շատ վնասակար ազդեցութիւն ունեցաւ դաշնակից-
ների և հեզ ցեղերի վերայ, այնպէս, որ յաջողու-
թիւնը կարող էր և միւս բեդուին ցեղերին դրդել
այնպիսի ձեռնարկութեան:

Դրան միացան և ուրիշ փոփոխութիւններ:
Խաղաղութիւնը բաւական երկար ժամանակ չ՚քան-
դուեց, բայց վերջին ժամանակները, քանի մի նշան-
ներից կարելի էր եզրակացնել, որ էմիր Աբդ—էլ—
Կադէրը նորից ժողովրդին գրգռում էր Ֆրանսիական
կառավարութեան դէմ և հրաւիրում նոր պատերազ-
մի: Ֆրանսիական կառավարիչները այդ բանն իմացել էին



և ուշադրութեամբ զննում էին Կաբիլների ամէն մի
շարժմունքը Ատլաս լեռներում. դոքա թափառա-
կան արաբ ցեղերից և տուարեկներից էին սերած
որ բնակւում էին օազիսներում և նոյն իսկ անապա-
տի սահմաններում: Բայց Աբդ—էլ—Կադէր իւր
պատրաստութիւնները ծածուկ էր անում: Ազգա-
կից ցեղերը միմիանց հետ մեծ յարաբերութեան մէջ
էին և հետևաբար իրանց գաղտնիքն այնպէս սրբու-
թեամբ էին պահում, որ Ֆրանսիացիք իւրաքանչիւր
րոպէ կարող էին գործ ունենալ ընդհանրութեան
հետ, յանկարծ ապստամբելովը: Կարծիք չկար, այն
յարձակումը, որ տուարեկներն արեցին Ֆրանսիացի-
ների հպատակ ցեղերի հողերի վերայ, հետևանքը
հենց այդ էր և նոցա նպատակն էր միւս ցեղերին վա-
խեցնել, որպէս զի Ֆրանսիացիների դաշնակից չդառ-
նան, և մինչև անգամ այնպէս հարկադրել, որ խա-
ղաղ բնակիչները վստահանան Ֆրանսիացիների դէմ
ապստամբել և մտնեն Աբդ—էլ—Կադէրի դրօշի տակ:
Այդ բոլորն՝ Ալժիրում լաւ էին իմանում, բայց այժմ
հեշտ չէր ուղղել այն թեթև սխալը, որով պատրաս-
տուող անցքի առաջն առնելու համար կանչուեցան
համարեա բոլոր Ֆրանսիական զօրքերը, որ նուաճած
երկրի շրջակայքումն էին գտնվում:

Գրանդէնի գունդը, որ վենսենը պահանջել էր,
արդարև կազմում էր մի նշանաւոր քանակութիւն,

բայց որպէս զի սաստիկ հարուած տային, պէտք ամէնայն բան թողնէին. և երկիրը համարեա առանց զէնուոր էր մնում, նոյն իսկ Ալժիր քաղաքը, նորա խիտ բնակուած շրջակայքը և «Մետիջէի» հարուստ դաշտը: Եւ ինչ որ լինէր պէտք է այնպէս անէին, որ թուլութիւն չցոյց տային, որ ամենամնասակար հետևանքները զօրեղ լինէին:

Մինչդեռ գնդապետը իւր գնդով շտապով դուրս գնաց Ալժիրից, նոր զօրքերի էին սպասում Ֆրանսիայից՝ Ալժիրը պաշտպանելու համար, որ վտանգաւոր էր երևում: Վերջապէս գնդապետի հետևից սուրհանդակ ուղարկեցին,—նորան շտապեցնելու: Սուրհանդակը հասաւ նորան առաջին գիշերելու տեղը:

Զօրքը շատ դժուարութեամբ եկաւ հասաւ գիշերելու տեղը, որ առաջուց պատրաստուած էր մի առատաջուր առուի մօտ, կամ աւելի ճիշտ ասել հեղեղի մօտ, որը ընթայ՝ Ատլասի բարձրութիւններից վազում էր, բայց փոքր ինչ հեռանալով կորչում անհետանում էր դաշտերումը, ճահիճներ կազմելով, կամ աւազի մէջ անհետանալով: Այդ տեղն անուանվում էր «Հինգ արմաւենի մօտ». լաւ մնակայ տեղ էր, որովհետև կենդանութիւն տուող խոնաւութիւնը, որ ջրի մօտիկութիւննից տարածուելով մեծ տարածութեամբ, շրջակայքի հարուստ



բուսականութիւնը պահպանում էր: Մութ, թանձր անտառը ծածում էր մերձակայ լեռների ճիւղերը, և իջնում էր անուրանալով զառիվայրի վերայովը մինչև նոյն իսկ դաշտը, ուր բուսած էին միայն գեղեցիկ ծառերի խմբեր. չքեղ զալարի խոտը փռվում էր ինչպէս գորգ, որի վերայ տեղ–տեղ արմաւեններ էին բարձրացնում, և ցիր ու ցան ձկուն զազաթները ծովային քամուց շարժվում էին: Տեղը, որ գիշերելու համար ընտրած էր, զովութիւն էր ստանում այդ գեղեցիկ տեսակ ծառերի հինգ խմբից, որոնք ունէին անսովոր գեղեցկութիւն. և տեղը իւր անունն ստանում էր նորանցից: Այս կողմ այն կողմ ցրուած գաստակերտներում (ферма) ընդարձակ տարածութեան վերայ Ֆրանսիայից տեղափոխուողները պլտղատու այգիներ շինեցին, իւրեանց հօտերն արածացնում էին խոտաւէտ մարգագետիններում, իհարկէ բազմաթիւ զինուորուած հովիւների և մեծ մեծ կատաղի շների վերահսկողութեան տակ:

Սուրհանդակի գնալը բոլորովին աւելորդ էր, գնդապետն էլ առանց դորան շտապում էր, մինչև անգամ այնքան, որքան գլխաւոր հրամանատարը չէր կարող խնդրել: Այդ բանի համար նպատակ մասամբ մութ նախազգայումը դէպի վատը, մասամբ էլ այն ճշմարտութիւնը փորձի վերայ հիմնուած, որ տարուայ այդ ժամանակը շոգն օրէ ցօր կ՚աւելանայ

և ջուրը նուաչելով պատերազմը դժուարութիւններ կունենայ:

Զուաները, զօրքի մէջ, իբրև առաջաշարժ մարտիկք ընտրուած ուղտաններով և ձիաններով առաջ էին ուղարկուած և արդէն առաւօտեան հասել էին գիշերելու տեղը, իսկ զունդը հոգնած լինելով մինչև երեկոյ հազիւ հասաւ: Բոբերտը խնդրեց իրան էլ զուաների հետ տանելու, նա կամենում էր աւելի յարմար վրան շինելու իր բարի պարոնի համար:

Նորա հետ գնում էր և մի զունդ հեծելազօրք աֆրիկական եգերներից:

Այսպես, գրաւած կենդանի խօսակցութիւններով և կատակներով, նոքա անցնում էին գեղեցիկ դրութիւնները, չկասկածելով, որ պէտք պատերազմեն արաբների հետ, նախ քան ձեռք կ'տան իրանց կատարելու աշխատութիւնները, որովհետև աչք չէր կարծիլ, որ ապստամբութիւնը կարող էր տարածուել մօտիկ մինչև Փրանսիացւոց գլխաւոր բնակութիւնները: Բայց Էմիր այնքան հմուտ և խորամանկ մարդ էր, որ իրան ապահովացրեց բոլոր անխաղաղ լեռնական և անապատի բնակիչներից, նախ քան կ'կամենար իւր մտադրութիւններն առաջ տանել մանր մունր յարձակումներով:

Գաղտնի, խիտ անտառի միջով՝ Կաբիլների, մի ցեղն իջաւ լեռներից մինչև վերոյիշեալ



«Հինգ արմաւենիների խմբ» անուանուած տեղը, որտեղ Փրանսիացիք հաւաքուել էին գիշերելու: Նոքա այնտեղ թաքնուեցան, որ հովիւները և բնակիչները չտեսնեն մինչև իւր ժամանակը և այնպէս խորամանկ կերպով թաք կացան, որ նրանց ներկայ գտնուելու ամենափոքր նշանը Փրանսիացիներին անյայտ մնաց, այնպէս, որ նոքա կարող էին զուաների առաջապահ զօրքին վտանգի մէջ լինելը յայտնել, որոնք առաջով եկան նշանակեալ տեղը և կարգաւորուեցան հանգստանալու—քնելու՝ գիշերով անքուն ճանապարհ եկած լինելով, քան թէ գործի և պատրաստութեան ձեռք կ'տային:

Նոքա այնպէս փախցն իրանց մտքիցը հեռացրել էին, որ կամաց կամաց բեռները վայր բերին ուղտերիցը, խմեցրին նրանց սառը և պարզ առուիցը և արձակեցին թարմ և կանաչ խոտի մէջ արածելու: Նոքա մինչև անգամ պահապաններ չդրին և իրանց մեծ մասը իսկոյն քաղցր և խոր քնի մէջ մտաւ:

Բոբերտը նոյնպէս շատ հոգնել էր գիշերը ճանապարհին՝ թամբի մէջ նստած լինելով, և զմայլած մտածում էր, թէ իւր սիրելի ձին կարգադրել, և ինքը մի տեղ ստուերումը՝ քնի փափուկ գալարուկ խոտի վերայ: Ձիուն ջուր խմեցնելով, նա կամաց—կամաց գնաց, ձին ձեռքին բռնած ունելով «Հինգ արմաւենիների» միւս կողմը, մի փոքր խառոչի մօտ, ուր

հովիւը ծառին թիկն տուած նստած էր։ Նա կամենում էր հովուին խնդրել իւր ձիու վերայ հըսկելու, որ ցեխերի մէջ չխրուի։ Հովիւը ոտից մինչև գլուխը զինւորուած, այդ յանձնարարութիւնը շատ սիրով ընդունեց, բայց Ռոբերտի առաջին խօսքերից նորա մէջ մի ծածուկ շփոթմունք առաջացաւ, ուստի նա պատճառը հարցրեց։ Ռոբերտը պատասխանեց.—

— Չգիտեմ, բայց միայն թէ ձեզ և թէ մեզ ապահով չեմ համարում Կաբիլներից։ Նոքա վերջին օրերը, իրանց սովորութեան հակառակ, քանի մի անգամ երևացին այս տեղերում, և իրանց շատ լկտի և յանդուգն էին պահում։—Նրանց ամենայն բան յայտնի է ինչ որ Ալժիրումը լինում է. մի՞ թէ նոքա չգիտեն որ դուք այս գիշեր այստեղ պիտի գիշերէք։ Այդ պատճառաւ իմ շունը, «Սուլթանը», որ ունի մարդկային խելք և զննողութիւն.—ինչպէս էլ ձեզ հետ խօսեցածիցս կարող եմ չարագուշակ համարել.—առաւօտից սկսած իմ շունը միշտ անհանգստանում է և հաջում, ըստ երևութին առանց որ և է պատճառի։ Եթէ կարելի արձակել, նա արդէն վազած կ՚լինէր դէպի անտառը, որտեղ նա մի անսովոր բան է զգում, նայեցէք ինչպէս է ձգձգում թոկը։

— Հը՞, արձակեցէք նորան, ասաց Ռոբերտը, վերցնելով իւր հրացանը թամբից և նայելով հովուին, որ տեսնի լի՞քնէ թէ ոչ.—գոնէ մենք նորա



անհանգստութեան պատճառը կ՚պարզենք։

— Այդ էլ կարելի է, ասաց հովիւը,—բայց քաղցած առիւծը մռնչում է. այդ և միւս առթով ես յանդգնում եմ ասել, որ չզրկուեմ թանգագին շանիցս, ահա, ինչու ես ամենեւին չէի վճռում։

— Բայց չէ որ բանը հայրենիքի ծառայութեան մասին է. շատ կարելի է և բազմութեան կեանքին վտանգ է սպառնում։ Արձակեցէք շունը։

Հովիւն իւր հաստատուից, ահագին շունը արձակեց, բայց նորա յետևից վազելը անխելքութիւն կ՚լինէր։ Նա ուղիղ գծի վերայով մեծ քայլերով թռչկոտում էր դէպի անտառի խորքը՝ հաջելով. այնտեղ նորա հաջոցը փոխուեցաւ կատաղի ոռնոցի։

— Այնտեղ Կաբիլները դարան են գործել, վճռողաբար արտասանեց հովիւը։

— Դուք հաւատացած էք։

— Գրաւ կ՚գամ իմ կողմից մէկի փոխարէն հարիւրով։ Ռոբերտը վազեց դէպի սպաները, զարթեցրեց նրանց ու զուաներին և բոլորին ոտի կանգնացրեց։ Մի քանի րոպէից յետոյ զուաները պատրաստ էին պատերազմի, և նախագիծ կազմելով վազեցին ընտան բարձրութեան վերայ ամենախիտ տեղը։

Կարծես երկրից դուրս եկան՝ ամենայն կողմերից մութ գոյն երեսները լեռնականների, նոքա կամե-

ցան կարգեր կազմել, բայց գուլաների արագ յարձակումը ժամանակ չտուեց նրանց:

Թնդացին հրացաններ, քանի մի Կարիբներ ընկան: Նոքա հեռանում էին, յետոյ կրկին աներկիւղ յարձակվում, բայց իւրաքանչիւր անգամ յաղթվում գուլաներից:

Սակայն Փրանսիական զօրքերը շատ քիչ էին և չէին կարող անընդհատ պատերազմել, եթէ որ օգնութիւն չէր եկել զօրքի առաջին բաժինը, որ միւս կողմից յարձակուեցաւ Կարիբների վերայ և սաստիկ շփոթեց նրանց:

Վերջապէս նրանով, որ նրանք փախան լեռները, ուր գուլաները նոցա հալածում էին մինչև գիշերը, և յաղթութիւնը հալածելուն վերջ դրեց:

Ռոբերտը միւսներից վատ չէր կռւում, ուստի ստացաւ մի քանի թեթև վէրք, սակայն առատ արիւն հոսելուց, նրան գտան անզգայ և ուժից ընկած: Առաջապահ զօրքումը բժիշկ չկար, բայց գտնուեցաւ մի ծեր զինուոր, որ կարողացաւ առաջին անհրաժեշտ բանն անել՝ այն է վէրքերը կապել, և գնդապետը մնացած զօրքով եկաւ իւր սիրելուն թոյլ գտաւ և գունաթափ, բայց այնպէս խոր քնած, որ մինչև անգամ եկող զօրքերի ձայները չզարթեցրին: Նա շատ վախեցաւ, երբ իմացաւ որ Ռոբերտը մասնակից էր պատերազմի մէջ, բայց միևնոյն ժամանակ



հայրենական հպարտութեամբ գոհանում էր, որ հինգ ամենափորձուած և ծառայած զինուորները գովում էին նորեկին նորա քաջութեան և կենդանի հոգու ունենալու համար: Թէպէտ բժիշկը նրան հաւատացնում էր ճշմարիտ խօսքով, որ ամենևին վտանգի տեղիք չկայ, խեղճ ծերունի ծերայրը երկիւղի մօտից չէր հեռանում, սակայն հինգ վիրաւորին ինքը մինչև կէս գիշեր նորա անկողնի մօտ նստած մտածում էր, թէ ինչպէս պիտի կենդանի առաւօտը հասնի:

Բայց դրանից նա երկու մտքանի էր՝ թէ ճանապարհը շարունակի, թէ մի առ ժամանակ մնայ այնտեղ: Նախատեսնելով, որ իւրաքանչիւր քայլափոխում կարող է արգելքի պատահել և համարելով իւր գունդն այդ դէպքի համար բոլորովին անկատար, գլխաւոր հրամանատարին խնդրեց, որ յայտնի յանգամանքներից ստիպուած, շատ կարելի է «Հինգ արմաւենիի մօտ» սպասի հեռաւոր զօրաբաժնի դառնալուն, որովհետև անդադար յարձակումները զօրքին շատ թուլացրին, ուստի խնդրում էր որքան կարելի է զօրքը շուտ ուղարկել: Վճռեց հետևեալ առաւօտ իւր բոլոր սպաներին պատերազմի համար խորհուրդի կանչել: Խորհուրդի հետևանքն այն եղաւ, որ վճռեցին սպասել մինչև զօրքի գալն Ալժիրից: Գնդապետը սրանով շատ բաւական մնաց, որովհետև Ռո-

բերդը նորա անկախութեան հակառակ դեռ թոյլ էր, և այդ սպասելը Ռոբերտին միջոց տուեց ուղղուելու:

Մնալը, այդ միջոցին, երևում էր, երկար խաղաղութիւն չէր բերել: Կաբիլները համարեա իւրաքանչիւր օր դուրս էին գալիս իրանց անտառների և լեռների դարանից և շատ անհանգստացնում Ֆրանսիացիներին: Սոքա ամէն մի անգամ յաղթվում էին, բայց կարծես այդ նրանց աւելի կատաղեցնում էր, որովհետև օր ըստ օրէ աւելանում էին:

Ութ ամբողջ օր գունդը «Հինգ արմաւենիների» մօտ մնում էր, երբ վերջապէս սպասուած զօրաբաժինն եկաւ Ալժիրից: Այժմ արդէն Կաբիլները հարկադրուեցան լեռների խոր տեղերը քաշուել: Ֆրանսիացիք այժմ կարող էին անարգելք առաջ գնալ, իսկ նոր եկած փոքրիկ մարտկոցը (батарея) բաւականի տեղ էր բռնել ովազիսներից՝ տաւարակների առաջ: Մեր պատմութեան ընթացքում մի քանի անգամ յիշել ենք ովազիս բառը, բայց մեր ընթերցողներից ոմանք կարծեմ ուրախ կ՚լինեն այդ բառի նշանակութիւնն իմանալ:

Ինչպէս ջրային անապատի մէջ—ծովի կամ ովկիանոսի, ցամաքից մեծ կամ փոքր հեռաւորութեան վերայ պատահում են կղզիներ, այնպէս էլ տաքացած աւազոտ, ամայի անապատների մէջ պատահում են մեծ կամ փոքր տարածութեամբ առանձնացած



կանաչ տեղեր, ծածկուած խոտով, թփերով—կատարեալ կղզիներ ցամաքի, այն՝ անչափ, անմարդ, և անպտուղ տարածութեան վերայ:

Աֆրիկայի շոգ ամայի կամ անապատային շերտերումը յաճախ աւազին տարածութիւնների վերայ բոլորովին ջուր չ՚կայ, իսկ ուր չ՚կայ ջուր—այնտեղ չ՚կայ և կեանք, չ՚կայ խոտ, ծառ, չ՚կայ մարդոց և կենդանիների համար կերակուր:

Ովազիսը նոյնպէս շուտով է բաժանվում անապատի աւազից, ինչպէս կղզին ալիքներից. Նորա մէջ գտնվում է քաղցր ջրի աղբիւր կամ առու, չորս կողմը խոտը կանաչին է տալի, թփերը բուսնում են խիտ, արմաւենիներ և հարաւային ուրիշ ծառեր, որոնք, նայելով նրանց պտուղների անդադար և համով լինելուն, կազմում են կեանքի անհրաժեշտ պայմանն արաբների համար: Այն տեղ՝ ուր արմաւը հասնում է, դուրս են գալի և միւս բուսեղէններից, այնտեղ Տուարեկները և ուրիշ ցեղեր իրանց համար խրճիթներ են շինում, արածում են խաշինները, միով բանիւ դառնում են նստակեաց ժողովուրդ: Ովազիսը որքան ընդարձակ է, այնքան էլ միլիոնաւոր թուով բնակիչ ունի, այնքան հօտերը բազմաթիւ են, որոնք բնակիչների հարստութիւնն են կազմում:

Այստեղ հարկաւոր է յիշել մի հանգամանք, որ կ՚բացատրի այդպիսի ովազիսներ կազմուելը:

թեթեւամտութեամբ անտառների ոչնչացնելը Ֆրանսիայում Կօր—դ' Օր Դեպարտամենտի լեռների վերայ մեծ խեղճութեան պատճառ եղաւ, ոչ միայն չնախատեսնուած լինելով, խիստ բնակութեան գրութեան համար: Բանը նորանում չէ թէ անտառները միայն նրանով են օգտակար, որ շինութեան և այրելու համար փայտ են տալիս. այնտեղ, ուր կլիմայի խոնաւութիւնը պահանջում է բնակարաններում արհեստական տաքացրած օդ. բայց և նորանով, որ նրանց ստուերի տակ ընկնող անձրեւն ու ձիւնը, այնպէս շուտ չեն գոլորշիանում, այլ ծծվում են երկրի մէջ:

Թարմ և ցամաք կանաչի մէջ, ուր երկիրը ծածկուած է, թացութիւնը երկար է պահվում և ծանր է երկրի մէջ ծծվում, որտեղ նա մտնում է տալի աղբիւրներին, որոնք իրանց պարզ, մաքուր ջրերը խմեցնում են մարդոցն և անասուններին. յետոյ կազմում են առուներ, գետեր և տարածում են ամբողջ երկրի վերայ պտղաբերող խոնաւութիւն:

Երբ անտառները ոչնչանում են և լեռները մերկանում, այնուհետև ջուրը ոչ մի տեղ չի կարողանում մնալ կանգ առնել, այլ վազում է ինչպէս առու, որ սաստիկ անձրեւներից կամ հալչող ձիւներից մեծանալով, մեծ դժբաղդութիւն է պատճառում աւելի դաշտ տեղերի բնակիչներին: Միւս, աւելի վատ հետեւանքն անտառների ոչնչացնելու՝ կայանում է



նորանում, որ աղբիւրները դաշտերումը ցամաքում են, իսկ մեծ երաշտութեան ժամանակ և՝ առուները, և լինում է ջրի պակասութիւն, որն ամենաքաղցրերը և ամենապտղաբեր դաշտը կարող է անապատ դարձնել:

Այսպէս էլ Կօտ—դ'Օր Դեպարտամենտումը պատահեց: Դորանում իրանք բնակիչներն էին մեղաւոր, և մասամբ էլ կառավարութիւնը: Անտառները կտրատեցին մինչև, որ ոչինչ չմնաց և քսան ու հինգ—երեսուն տարուց յետոյ այդպիսի թեթեւամտութիւնից սարսափելի հետեւանքներ ունեցան: Աշնանը, ձմեռը, գարնանը, անզիմադրելի կերպով հեղեղները լեռներից գլորւում էին դաշտերը, ոչ միայն պտղաբեր տեղերն էին լուանում, այլ ափերից անց էին կենում, հովիտները քարերով կոպիճներով (валунъ) և ամենայն տեսակ աղբով լցնում. վերջապէս ջրհեղեղները ոչնչացրին ցանքերն ու հունձերը: Այս միջոցին ջրհորները ցամաքեցան, և շատ տեղերի բնակիչներ ջրի պակասութիւնից սկսեցին հեռանալ: Անբաղդ բնակիչները մասամբ գաղթեցին Ալժիրիա, մասամբ էլ ցրուեցին ողջ Ֆրանսիայում: Երկիրը փոխուեցաւ անպտուղ անապատի, կամ տեղ—տեղ ճահիճների, օդը վարակելով ամենայն տեսակ տենդերով և հիւանդութիւններով լցուեց:

Լուդովիկոս—Փիլիպոս թագաւորը, ամենից առաջ խօսեց մի աբբայի հետ, յետոյ ազատեց նորան

քաղաքական պարտականութիւնից—որովհետև նա առաջ ծխատէր քաղաքների կարգումն էր—մեծ ռոճիկ նշանակեց և յանձնեց, որ ամենայն տեղ ման գայ, որտեղ մարդաբնակութիւնը նեղութիւն է քաշում անջրութիւնից: Ոչ մի տեղ այդ նեղութիւնն այնպէս զգալի չէր և այնպէս ծանր հետևանքներ չունեցաւ, ինչպէս Ալժիրում: Աբբա Պարամէլը այնտեղ էլ գնաց Թագաւորի ցանկութեամբ: Գտաւ և շինեց բազմաթիւ ջրառատ աղբիւրներ—ճշմարիտ բարեգործութիւն, այրուած ու չորացած երկրի համար:

Յարգելի աբբայի օգտակար գործունէութիւն սկսելուց քանի մի տարի առաջ, մէկ Ֆրանսիացի օֆիցեր—կարծեմ նորա անունը Ֆառ էր—եղել էր Սահարայ սարսափելի անապատումը և այնտեղ շատ տեղեր հետազօտել էր հողը:

Այդ խելացի ուսումնական և հետաքննին մարդը վերադառնալով Ֆրանսիա, գիրք տպագրեց, որի մէջ նա հաստատ հաւատարում էր, թէ, եթէ այն անջուր անապատի յարմարաւոր կէտերի վերայ հողը մի քանի հարիւր ֆուտ փորենք, աղբիւրներ կը բղխեն: Հասարակութեան մեծ մասն իհարկէ ծիծաղում էր նորա վերայ, բայց գտնուեցան խելօք մարդիք, որոնք ըմբռնեցին նորա միտքը և սկսեցին քարոզել, որ ճշմարիտ բարեգործութիւն կլինէր անապատումը աղբիւրներ գտնել, որովհետև նրանց



շուրջը գոյանում են ովազիսներ: Այս երևակայութիւնների հիման վերայ, Թագաւորն աբբային ուղարկեց Ալժիրիա, յանձնարարութեամբ ամենայն տեղ աղբիւրներ բանալու, որտեղ յարմար կ'տեսնի և զգուշանայ, որ գտած աղբիւրները նորից աւազով չլցուին: Նորա գործունէութիւնն այնտեղ էլ յաջողութեամբ անցաւ, ինչպէս Ֆրանսիայում:

Քիչ դժուար և շարունակաբար աշխատանքից յետոյ, բացուած ծակոտիկներից առատ և մեծ քանակութեամբ ջուր վերև ցայտեց: Կարճ ժամանակամիջոցում ամբողջ դրութիւնը կանաչեց, ծածկուեց խոտերով և զանազան տեսակ բոյսերով, արմաւենու կորիզներն Աստուած պահպանեց այնքան ժամանակ, որ աւազի մէջ ընկած մնալով, բուսնելու ոյժ ստացան—բարձրացաւ ամբողջ մանր արմաւենիների անտառ: Միով բանիւ կազմուեցաւ ովազիս, որն որ այժմ միշտ մեծանում է, որովհետև ոյժ ունի աւազին դիմադրելու: Այդ գեղեցիկ ովազիսները նկատողաբար ազդում են կեանքի վերայ, համարեա կենդանի ջրի ստեղծող ոյժի մասին, ինչպէս աւանդներում ասվում է:

Տուարեկների ցեղերը, որոնց մեծամասնութիւնը բնակվում են Սահարայի ովազիսներում, շատ բազմաթիւ են: Դոքա բոլորեքեան աւազակներ են. անապատի իսկական յափշտակողներն են: Դոքա կարաւանների վերայ յարձակվում են, և ոչ թէ միայն

նրանց ապրանքներն ու հարստութիւններն են եղել, այլ նրանց դէպի իրանց տունն են քշում ուղտաններով, ձիաներով և մարդիկներով: Վերջինները շատ գնահատւում էին, որովհետև տարաններն ընդարձակ վաճառականութիւն ունէին Կոստանդնուպօլսի և Միւրնայի հետ: Նոքա քաջ մարդիկ են, և իւրաքանչիւր կարաւան որ երկիւղ չէ կրում անապատի միջովն անցնելիս և զօրքով ամրացած — ապահոված չէ լինում, անդառնալի կ՚կորչի:

Ինչպէս մի անգամ այն տարին, որի մասին պատմում ենք, գիշատողներին չաջողեց. մէկ քանի կարաւաններ Սահարայի միջով: ապահով անցան Այդ անաջողութիւնների համար, Աբդ—Էլ—Կադերը իւր հնարքներով, կամեցաւ Ֆրանսիացւոց դաշնակիցների վերայ յարձակւելով շահւել: Սակայն Կաբիլների յարձակումը Ֆրանսիական գնդի վերայ «Հինգ արմաւենի մօտ» ամենևին էմիրի նախադծին յարմար չէր, որովհետև գաղտնի դաշնադրութեան գոյութիւնը շուտով կ՚յայտնուէր:

Անապատի սահմաններում արդէն վաղուց նկարվում էին բնական կասկածելի շարժողութիւններ և Ֆրանսիական իշխանները պարզ տեսնում էին, որ անհանգիստ և յանդուգն էմիրը շատ մօտիկ է: Կաբիլների յարձակումը ժամանակից փոքր ինչ առաջ էր եղել, բոլոր ցեղերի ընդհանուր շարժողութիւնը



քաղաքական գաղտնի և կրօնական վարդապետութիւնը մինչև միլիոնաւորութեան էր հասնում, երբ մահմեդականը մտածում է ամենայն բան երկրիս վերայ և մտաբերում է միայն, որ իւր կրօնը հիմնաւոր օրէնքներից մէկն է, որ քարոզում է բոլոր ուրիշ այլադաւաններին և միայն յիշում է թէ Ղուրանը խոստանում է յաւիտենական երջանկութիւն՝ Մահմեդի դրախտում, իւրաքանչիւր ուղղափառին, որ անհաւատների դէմ տուած պատերազմում ընկած է

Գրանդէն գնդապետի յայտարարութիւնը բոլորովին պատռեց այն վարագոյրը, որը թագցնում էր գաղտնի գործերը: Այժմ ժամանակէ ներգործել հանճարով. այնպէս անենք, որ չարը սաղմի մէջ սպանենք:

Պատերազմ սկսուելու է սարսափելի կերպով և շարունակաբար, սակայն ոչ երկարատև, որովհետև Կաբիլների առաջին փորձն այնպէս թանգ նստեց իրանց, որ այլ ևս իրանց թոյլ չէին տալիս յարձակումն ընդարձակուել և, ըստ երևոյթին, աւելի կամենում էին պաշարի բեռները յափշտակել, որ ընդհակառակ դնում էր այնպէս խիստ ծածուկ, որ չէին կարող իրանց ցանկութեանը հասնել: Հէնց էմիրն էլ դեռ բոլորովին պատրաստ չէր:

Գնդապետը սուրհանդակներ ուղարկեց Ֆրանսիական փոքրիկ գնդի մօտ, որ նրանց տարածի Ֆրանսիական երկրի բոլոր սահմանների վերայ. այն զօր-

քերի առաջնորդներն ուղարկեցին բաւականի քանակութեամբ պաշարեղէն, այնպէս որ արդէն ոչինչ չէր խանգարում պատերազմ սկսելու՝ աւազակաբարո Տուարեկների դէմ:

Իմանալով, որ այդ չար աւազակութեան համա անհանգիստ ցեղերից կարելի է սպասել ամէն տեսակ պատերազմական խորամանկութիւն, գնդապետը հրամանատար լինելով բոլոր զօրքի վերայ և քանի մի անգամ պատերազմած լինելով այդ վայրենի Թափառականների հետ, իւր զօրութիւնը բաժանեց և կազմեց մանր գնդեր: Բոլորովին պատրաստուած, հոգած բոլոր կարիքները, հաւատարիմ և տեղեակ առաջնորդներով, առաջուց իմանալով՝ որտեղ կարելի է Թարմ ջուր գտնել, այս բոլոր անհրաժեշտ կարիքներն իմանալով, իւր զօրքովը գնաց պատերազմ: Նրա մօտ գնում էր Ռաբեմար, որը պատերազմից յետոյ «Հինգ արմաւենիների մօտ» համարեա բոլորովին երեխայական Թուլութիւնը Թողեց, իրան ցոյց տուեց ինչպէս մեծ մարդ և ընդհանուրին սիրելի:

Յարձակումը եղաւ մեծ կարգապահութեամբ և բոլորովին լուռ, պայծառ լուսնեակ գիշերով:

Զօրաբաժինն արդէն մի քանի օրեր, որ գնում էր, ծանր և զգոյշ, բայց դեռ ևս չէր հանդիպել Թշնամիների մօտիկ լինելու նշաններին: Առաջին մեծ ավազխի մօտ պիտի բանակը բաժանէին, որ մարդիկն



ու կենդանիները հանգստանային, որովհետև իւրաքանչիւր րոպէ կարելի էր սպասել յանկարծակի յարձակումն: Արդէն բանակի համար տեղն ընտրած էր: Պահապանների համար տեղեր պատրաստեցին, այժմ մարտկոցները երկու էին, զէնքերը լցրած դարսած էին, միով բանիւ ամէնայն բան պատրաստած էր պատերազմի համար, որ չ՚լինի Թէ յանկարծ իրանց գերի առնեն, այլ կամենում էին, որ բոլոր վայրենի ցեղերի դէմ կռուել, և եթէ կարելի լինի հարկադրել Թշնամուն, որ յաղթութիւնն իրանց կողմը մնայ:

Բայց խաղաղութիւնը ոչնչով չ՚խանգարուեցաւ: Գիշերը վերայ հասաւ, նորա հետ և Թափանձող ցուրտ. այդ ջերմ կլիմայում գիշերների յատկութիւնն է, շոգ օրուանից յետոյ բաւականի ցուրտ է անում, որ և աւելի զգալի է լինում: Ձիաներն առաջների խառնուելով, պառկեցին տաք աւազի վերայ, որը ցրտից պաշտպանում էր. մարդիկն էլ ընթրեցին և խոր քնեցին, փաթաթուելով հաստ բրդէ վերմակների մէջ. ամէնայն տեղ խաղաղութիւն էր Թագաւորում, երբեմն երբեմն խաղաղութիւնն ընդհատվում էր խուլ ոռնոցով կամ չաղալի հաչելովը: Միայն գնդապետի վրանումը դեռ ևս կրակ էր վառվում: Նրան սպաները շրջապատում էին, որ միւս օրուայ համար կարգադրութեան հրաման ստանան: Այս զինուորական խորհուրդը մօտ կէս գիշերին վերջացաւ. օֆի-

ցերեկը հեռացան և վրանումը մնացին գնդապետի ցանկութեամբ միայն երկու աշխատաւոր և Ռօբերտը:

— Պարոններ, սկսեց գնդապետը, — անմիտ կլինէր այն գնդապետը, որ այս գիշեր պառկէր — քնէր: Միրոս ասումէ — որ թշնամիները առանց յարձակման այս գիշեր հանգստանալու չեն: Ես մտադիր եմ պահապան գնալու, քան թէ հանգստանալ:

Գնանք: Ամենայն բան պատրաստ է; ճշմարիտ չե՞մ ասում, Ռօբերտ:

— Պատրաստ եմ ես, գնդապետ, պատասխանեց երիտասարդը:

— Ձիապահները չկան, ինչպէս դուք հրամայեցիք: Միայն իմ ձինէ թամբած:

— Ինչու՞ համար ես կամենում մեզ հետ գալ, հարցրեց գնդապետը:

— Որտեղ հարկաւորուի ծառայելու. օրինակի համար ձիանները բռնելու, եթէ դուք իջնելու կլինէք՝ խոնարհութեամբ պատասխանեց Ռօբերտը: Նա հաստատ էր խօսում, երևում էր, որ նա վտանգը հասկանում էր:

Լաւ, որդի, ասաց գնդապետը, ուշի ուշով նայելով նրա վերայ: Ճանապարհ ընկնենք, պարոններ, — ժամանակ է: Զէնքերիդ նայեցէք, յայտնի չէ, թէ ինչ կարող է պատահել, էլի կրկնեց նա վրանից դուրս գալով, որի յետևը գտնւում թագած



հաստ բոխիներին կապած կանգնած էին չորս հիանալի ձի, և անդադար սմբակներով առաջացուցան էին անում:

Պահապանների շղթայի մօտից անցնելով և ամենայն տեղ մեծ կարգ ու կանոն տեսնելով, գնդապետը ընկերներով պահապանների գծից դուրս եկաւ և բանակատեղիցն աւելի հեռու, իսկ թշնամեաց ավագխիցը մօտիկ կանգնեց: Այնտեղ կանգնած էին երկու Սպահի (Ափրիկայում թեթև հեծելազօրքի զինւորին այդպէս են անուանում) որոնցից մէկին նա ինքն անձամբ ճանաչում էր իբրև քաջ հաւատարիմ զինւոր:

— Բակինէ. բարեկամ, կանչեց նրանցից մէկին, — ինչ է կատարվում այնտեղ հեռու անապատումը:

— Չգիտեմ. ինչ կարող եմ մտածել, անհաստատ ձայնով պատասխանեց Սպահին, — բայց ահա կէս ժամ է արդէն, որ մի տեսակ աղմուկ եմ լսում ավագխի կողմից, կարծես ձիու ոտի ձայն լինի, բայց կրկին երկմտում եմ. երբեմն ձայնը պարզ գալի և երբեմն խուլ:

Գնդապետը շուտով ձիուցը վայր թռաւ, պառկեց գետնին և ականջը գետնի վերայ դնելով լսում էր:

— Դու ճշմարիտ ես ասում, Բակինէ. վերջապէս տեղից բարձրանալով ասաց նա, ճշմարիտ, որ այդ ձիու ոտնաձայն է, և մի սաստիկ բան է երևում իմ ականջին, որովհետև կարծես անպայտ ձիաներն

արշաւում են փխրուն աւազի վերայ։ Այդ՝ գուցէ առանձին զօրաբաժինները մի տեղ են հաւաքւում հարկաւոր է իմանալ։ Առա՛ջ, պարոններ։

Բոսկինէն լուռ, գլուխը շարժելով, նայեց ձիու քշող մարդոցը յետեւից։

— Յանդուգն խաղ հնարեց գնդապետը, ընկերներին ասաց նա, վերադառնալով նրանց մօտ, եթէ նրանք կ՚առնեն սրա՛ն, նա և իր հեծեալները կորած են։ Ես ճանաչում եմ այն աւազակ անպիտաններին։

Այս միջոցին ձիաւորները բաւականի տարածութիւն կտրել էին, երբ վառուած գնդապետը մտաբերեց, թէ ինչ զգուշութիւն է պահանջում այդպիսի դիտողութիւնը։ Նա ձին կանգնեցրեց և ցածր ձայնով մի քանի հրամաններ տուեց, բայց արդէն ուշ էր։ Նա այնպէս չպէտք է յափշտակուէր, չպէտք է մոռանար, որ անապատի խորամանկ որդիքը միշտ ընդունում—իմանում են ամենափոքր բաները, որ նրանց առաջնորդներն անհաւատալի հմտութեամբ և վստահութեամբ հետեւում են թշնամուն. Եթէ որ նա անցել է անապատի այրող աւազը, պէտք էր նախատեսնել, որ այժմեան շարժումը յայտնի է բոլոր մանրամասնութեամբ։ Բայց նա երբէք այդպէս չէր կարծում, թէպէտ սպասում էր մի քանի այդ գիշեր, նա ամենեւին չէր մտածում, որ նրա յետեւից վաղուց են գիտում և ուղարկուած են գիտութեամբ



երկու խումբ, որ նրան և ճանապարհորդակիցներին գերի անեն։

Ձիաւորները միանգամ էլ կանգնեցին ահագին քարեկոյտի մօտ, համարեա ժայռի նման,—որի յետեւը հարկաւոր եղած ժամանակ կարելի էր թաքնուել,—և կրկին սկսան ականջ դնել. յանկարծ սեւ ամպի պէս ամենայն կողմից յարձակուեցան նրանց վերայ թշնամիների խմբերը։ Նոքա թէպէտ իր ժամանակին տեսան և իրանց ձիաներն յետ թեքեցին, յուսալով, թէ կարող կ՚լինեն իրանց պահապանների գիծը հանել, բայց իրանց հաշւումը սխալուեցան, որովհետեւ յետեւիցն էլ էին ճանապարհը կտրել։

— Լաւէ մեզ համար մեր կեանքը թանգ վճարե՛նք, բացականչեց գնդապետը՝ էլ ուրիշ ոչինչ չենք կարող ընտրել։ Այս նրա վերջին խօսքերն էին. նոքա հազիւ ատրճանակներն արձակեցին, երբ թշնամիները մօտեցան և նրանցից մէկի երկար նիզակը խրուեց նրա մարմնի մէջ—անցաւ մինչեւ սիրտը և նա ընկաւ գետնին—մեռաւ։ Երկու ադիւտանտ անընդհատ կռւում էին, բայց քանի մի րոպէում սպանուեցան։

Բոսկինը տեսաւ, թէ ինչպէս ընկաւ իր պարոնը և կամենում էր նրա մօտ ընկնել. բայց մի կարող ձեռք բռնեց նրա մէջքիցն ու քամարիցն և իսկոյն կապեց նրա երկու ձեռքերը, այնպէս, որ չկարողացաւ շարժուել։ Յափշտակողները սկսան

հեռանալ հողմի արագութեամբ, դիակները թողնելով և սպանուածների ձիաները: Նոքա պատահեցան գլխաւոր բանակին, որ նրանց դէմ էր ուղարկուած. առաջին կարգի պահապան զօրքի յարձակումն սկսուեց:

Նոքա իրանց կողմից լսելով հրացանների արձակելը, յետ գնացին բանակը, ուր ամենքը յուսահատութեան մէջ էին՝ գնդապետի ներկայ չլինելու համար: Բայց մերձաւոր վտանգը թոյլ չտուեց տատանման և մտածման: Անգլիական օֆիցերն առաջնութիւն ընդունեց և կարողացաւ մի քանի կարգ պատրաստ կանգնեցնել, նախ քան թշնամիների վերահասնելը:

Իսկ նոքա վերաթափեցին ինչպէս կայծակներ: Կռիւը տաք էր և մինչև անգամ գործիքներից անդադար յարձակուող կռիւը չէր կարողանում սաստել կատաղի վայրենիներին յետ գնալը: Յաղթութիւնը չէր հակում ոչ մէկ և ոչ միւս կողմը, թէպէտ Ֆրանսիացիք պատերազմում բարձր էին, ուստի և կարծում էին թէ, յաղթութիւնն իրանց կողմն է, սակայն նոքա չ՚կարողացան ծածկել, թէ այդպիսի կռուից յետոյ իրանք քիչ են, քան թէ Տուարեկները, ուստի անհրաժեշտ էր յետ քաշուել: Համարեա վիրաւորուած և կենդանի մնացածներ չկային — այլ բոլոր վիրաւորուածներն սպանուած էին: Տուարեկների համար աւելի ցաւալին այն էր, որ նոքա



պիտի վերադառնային իրանց տեղերն՝ առանց աւարի, առանց գերիների, նշանակում է նրանց յանդուգն և համարձակ քաջութիւնը ցանկացած օգուտը չ՚բերեց: Եւ այդպէս նոքա պիտի միայն Ռոբերտովը բաւականանային: Արաբ զինուորներից նա՝ որն որ հմտութեամբ քաշուեց ձին, որի վերայ Ռոբերտի ձեռքերը կապած էին թոկով, ձին քշած գնում էր անդադար նրանց հետ միասին, որոնք պատրաստ չորս ձի էին պահում իրանց հետ: Ոչ մէկը չէր խօսում միւսների հետ. վերջնական պատերազմի վախճանը, կարծես, ոչինչ օգուտ չտուեց:

Ռոբերտը չէր կարողանում շարժուել, թէպէտ զգում էր սաստիկ ցաւ մարմնի՝ թոկից կապուածներում. Նա բարձր ձայնով տնքում էր: Բայց նրա առաջնորդներն այդ բանին ուշադրութիւն չէին դարձնում, և իրանց գնացքը չէին դանդաղեցնում, որովհետև ձիաները չէին դադրում: Երկար ժամանակ դէնքերի թնդոցը լսւում էր, բայց աղաղակների լռեց, իսկ անապատի մէջ տեղը երևում էր մեծ ովասիս, ինչպէս կանաչ կղզի ծովի մէջ՝ այդ տեղ Տուարեկներն իրանց ձիաները թէքեցին:

Ովասիսը շրջապատուած էր ինչպէս դալար արմաւենիների և միմոզների խիտ անտառով — այնպէս խիտ, որ ակամայ մարդու մէջ հարց էր զարթնում, թէ նրա միջով ինչպէս են անցնում:

Երևում էր, որ գործ համար մեծ ճանապարհ էր շինած։ Այս ճանապարհովը գնացին մասն չքեղ, գոյն գգոյն ծաղիկներով զարդարուած մարգագետիններ, յետոյ մշակած դաշտեր, և այդ տեղ Ռոբերտը տեսաւ բաւական ցրուած տներ։ Ամենայն տեղ արածում էին անասուններ, հիանալի ուղտեր, և ձիանք առանց խաշնարածի վերահսկողութեան։ Բնակիչները նրանց հեռանալուցը չէին վախում, որովհետև անապատի դեղնագոյն և անվերջ աւազը շրջապատում էր օվազիսը ամենայն կողմից, և կենդանիները լաւ գիտէին, որ իրանց այնտեղ սպասում են աւազակներ, այնպէս որ մինչև անգամ օվազիսի ափն էլ չէին գնում։

Երբ ձիաւորները բնակութեանը մօտեցան, առաջ եկան կանանց, ծերերի և երեխանց մի խումբ, որ զանազան հարցեր էին անում. բայց նորեկների անբաւական և տխուր երեսների վերայ երևում էր, որ պատասխանը բոլորովին անդոհացուցիչ էր։ Առաջ եկողներն սկսեցին յափշտակած ձիաներին նայել, յետոյ հերթն եկաւ և Ռոբերտին. ձիուցը վայր բերին նրան. Նրա պատերազմական զգեստը բոլորի ծիծաղը շարժեց, նոյն իսկ շները նրանով հետաքրքրվում, նայում էին ու շօշափում։

Կարծելով, թէ գերին փախչելու վերայ չէ մտածում, որովհետև այդպիսի փորձ անելը կատարեալ



անխելքութիւն կ՚լինէր և կ՚հաւասարուէր ինքնասպանութեան, ուստի նրան բերող Տուարեկը կապեց Ռոբերտին և ազատ թողեց—առանց պահապանի, իսկ Ռոբերտը ոտի վերայ չ՚մնաց, ծարաւից թուլանում էր։ Իսկոյն նրան ջրով զովացրին, յետոյ մի փոքր բան կերաւ ճաշակով ու իսկոյն քնեց ինչպէս մեռած. պառկելով փսիաթի (ճիլոպ) վերայ, որ մի անկիւնում փռած էր։ Ուժից սպառուած այնպէս խոր էր քնել խեղճ գերին, որ չէր լսում մինչև անգամ աղմուկը, որ բարձրանում էր այն ժամանակ. երբ բոլոր պատերազմողները վերադարձան, և իրանց վիրաւորուածները բերին, հաղորդեցին և իրանց քաշած կորուստները։ Այդ միջոցին ահալի աղաղակներ էին հանում, ամենայն տեղ գոռում գոչում էին, լաց էին լինում, անիծում էին։

Ռոբերտը քնում էր, իւր նեղ դրութիւնը չ՚իմանալով։ Վերջապէս զարթեց սարսափելի երազից՝ կրկնուած այն միևնոյնը, ինչ որ տեսել էր աչքով՝ նա տեսաւ ինչպէս իւր սիրելի պարոնը—բարի գնդապետը ձիուցն ընկաւ. Նիզակը սիրտը խրուած լինելով։ Կամենում էր նրան օգնել, շտապել նրա մօտ, բայց չ՚կարողացաւ, որովհետև ձեռքերն ու ոտքերը կապած էին։ Իզուր տեղը տանջվում էր, որ թոկերիցն ազատուի, բայց այդ միայն զօրացնում էր անտանելի ցաւ մարմնի բոլոր մասերում։ Տնքում էր,

մազմնը ծածկուել էր սառը քրտինքով — վերջապէս զարթնեց և զգաց մեծ թեթևութիւն: Բայց երբոր նա բոլորովին ուշքի եկաւ և մտաբերեց, որ տանջող երևոյթի, համարեա, կէսը քուն էր և նրա: այն էր ներկայանում, ինչ որ իրականութեան մէջ պատահել էր, իսկ յետոյ մտաբերեց իր անձ, կերպ լինելը և սարսափեց:

Արդէն լուսանում էր. ամենայն տեղ գիւղամանական խաղաղութիւն էր թագաւորում գետ եզ. Խրճիթը մի գաւառի անցով երկու էր բաժանվում. Ռոբերտը մի կէսումն էր: Կայծակնի արագութեամբ նրա մէջ միտք ծագեց՝ փախչելու:

Վեր թռաւ — բայց այդ ևս քուն էր, որ սառաշխից աւելի շուտ ցրուեց: Մը փախչեմ, ո՞ւտեղ են գտնվում Ֆրանսիական երկիրները, որ կորած են, և այնտեղ ի՞նչպէս հասնեմ անապատի միջով, չէ որ այդ ճշմարիտ մահ է, աւելի տանջող ամեն տեսակ տարկութիւնից: Ձեռքերը կոտրտելով, հեկեկալով, նա կրկին իր փախուստի վրայ ընկաւ. այդ դժբաղդութեան մէջ ամենայն երկրապագու նրան կ'անիծէր, որ պատերազմական շորով կարուած էր, մոխանու՝ խաղաղ Աւրոր իր քաղաքական խորհարարի մօտ՝ Փարիզում:

Այնպէս փոթորիկը նրա հոգու մէջ բարձրանալով առաւելապէս հանդարտեց, ուստի նորից



պառկեց իր տեղը, ոչ թէ քուն մտաւ, այլ թըմբութեան մէջ մնաւ կիսով չափ մոռացուած, սակայն երկար չ'քաշեց: Երբ բոլորովին լուսացաւ, մարդիկ տեղերից շարժուեցին. Ռոբերտը բոլորովին զարթնեց և սկսաւ մտածել, արդեն բաւական հանգստացած, թէ իրան ի՞նչպէս պահի: «Անտրտունջ հնազանդուել և ջերմեռանդ երևալ». նա խոհեմութեամբ վճռեց մտածելով, որ ինչ ուզի անի, էլի գերի է, անխելքութիւն կ'լինէր իր դրութիւնը վատացնել անօգուտ անհնազանդութեամբ: Հենց այդ վճռին եկաւ թէ չէ, վարագոյրը շարժուեց, և տեսաւ իր առաջը մեծահասակ տուարեկին, իր տիրոջը:

Ռոբերտը անկղիցը վեր թռաւ: Նա իր զինուորիցը լսել էր, որ արաբների ստրուկներն իրանց պարոնի առաջ ծնգները կրծքին են դարսում և գլուխ տալիս: Նա այժմ այդ կատարեց, և ի՞նչ, տուարեկի մռայլ դէմքը փայլեց ուրախութիւնից: Նա երկար ժամանակ նայում էր իր գերու վրայ, յետոյ նշանով ցոյց տուեց պատերազմական զգեստը հանել, տուեց և հին բուրնուս ուղտի բրդից. գեղացի բնակիչները բուրնուս են անուանում երկար և լայն վերնազգեստը գլխանոցով, որ գլխի վրայ ծածկում են արեգակի կիզիչ ճառագայթներից պահպանելու համար: Երբ Ռոբերտը զգեստաւորուեց,

տէրը խրճիթիցը տարաւ ձիաների մօտ: Իւր սիրելի ձին, տեսնելով, սկսաւ գգուել: Երեւի Տուարեկին դուր էր գալի, որովհետեւ շատ փաղաքշելով ձեռքը քսեց Ռոբերտի ուսին:

Մինչ ձիաները նրան այնպէս սիրով չ՛հանդիպեցին, ընդհակառակ թշնամական զգացմունք էին ցոյց տալի անծանօթ մարդին, բայց նա զգուշութեամբ փաղաքշում էր նրանց, ուստի նրանք եւս սկսան խաղաղել: Տէրը հրամայեց նստել իւր ձիու վերայ եւ տուեց մի ուրիշը քաշելու. ինքը նոյնպէս հեծաւ իւր ձիաներիցը մէկը եւ չորսը քաշեց: Նոքա ջուր խմացնելու էին տանում: Վերադառնալով տուն հրամայեց Ռոբերտին, որ ձիաները մաքրէ, քորէ; իսկ ինքն ուշադրութեամբ դիտում էր եւ երեւում էր շնորհակալ էր մնում: Առհասարակ նա ամենայնի Ռոբերտի աշխատանքը գնահատում էր եւ նրա հետ լաւ էր վարվում: Զնայելով, որ Ռոբերտն առաւօտից մինչեւ երեկոյ աշխատում էր, երբեմն դաշտում, երբեմն ձիաների մօտ, բայց դորա համար այդ զարմանալի չէր: Ձիաների մօտ մնալը քանի մի օրուայ մէջ Նորբերն իրան հետ կապեց եւ ապրում էր համեմատաբար բաւականի խաղաղ: Երեկոյանները սաստիկ դադրած ու քաղցած եւ միայն այդ քաղցածութիւնն էր օգնում նրան ամեն տեսակ կերակուրն ուտելու առանց զզուելու, ամեն տեսակ կերակուր ուտելու,



բաւականի քանակութեամբ, Փրանսիական տեսակ— տեսակ կերակուրների ճաշակին սովորած:

Այս միջոցին Աբդ—Էլ—Կադերի վերկացրած ցեղերի եւ Ֆրանսիացիների մէջ պատերազմն առաջ էր գնում: Տուարեկներն էլ ազատ էին մնում եւ քանի մի յաջողակ յաղթութիւններից յետոյ, նոքա բաւականի բազմաթիւ գերիներ ժողովեցին: Անցաւ երեք ամիս, երբ մի գեղեցիկ օր Նուբիայից վաճառականներ եկան ուզելով՝ գերիներ առնելու: Ռոբերտը եւ երկու նեգր, նրանից յետոյ իւր տիրոջ ձեռքն ընկած, երեքին ներկայացրին վաճառականներին, ծախելու համար:

Ինչպէս անասուններին եւ ձիաների առեւտրականները առնելիս մանրամասն քննում են, որ իմանան թէ չունեն արդեօք պակասութիւն կամ վնասուած տեղ, որ ապրանքի գինը փոքրացնեն, այդպէս էլ այդ վաճառականներն էին քննում գերիներին: Ռոբերտի տէրն ուրախութեամբ տեսնում էր, որ իւր երեք ստրուկը, մանաւանդ սպիտակը նուբիացիներին դուր էին գալիս: Աճուրդն (торгъ) սկսուեց, բաւականի երկար ժամանակ շարունակուեց, ինչպէս հրէաների մէջն է պատահում:

Ռոբերտը, որ կարողացաւ բաւական մնալ իւր դրութիւնից ովազխում եւ տանել ամենայն բան, բայց իւրաքանչիւր փոփոխութիւնից վախում էր,

ուտելու իր սաստիկ ճարպոտ լեզուն խնդրում էր տիրոջը՝ իր մօտ թողնելու, բայց նա միայն ոսկորն էր բարձրացնում։ Փողը իր դիւթական իշխանութիւնը երեւեցրեց եւ այս հեռաւոր անապատի մի անկիւնում, այնպէս զօրեղ, ինչպէս քաղաքակրթուած Եւրոպայում։ Աճուրդը կայացաւ եւ Րոբերտը անցաւ Նուբիայի վաճառականների ձեռքը քսան սեւ ստրուկների հետ միասին, որոնց առել էին ուրիշ միւս բնակիչներից։ Նոյն իսկ գիշերը նոքա ճանապարհ ընկան դէպի ծովը. իր բարի եւ հաւատարիմ ձիուց բաժանուելը, Րոբերտին արտասուք թափել տուեց։

Գերիների ձեռքերը թոկով կապեցին մէջքերին եւ յետոյ զոյգ—զոյգ միմեանց հետ, բացի դրանից բոլոր զոյգ կապածների միջովը անցնում էր մի երկար թոկ եւս, այնպէս որ խմբի մարդիկը չէին կարող հեռանալ, այլ պիտի մի չափով եւ հաւասար քայլերով առաջ գնային։ Վաճառականները գնում էին ուղտանների վերայ նստած, նրանց հետ ունէին երկար թոկից շինած մտրակներ եւ երկար նիզակներ, ստրուկներին կանգնեցնելու համար, որովհետեւ երբեմն կամենում էին նրանց կապել, օրինակ, եթէ ձեռքերը թուլանում էին, կամ թէ մէկը յոգնածութիւնից վայր էր ընկնում։ Այդպիսի դէպքերի համար մէկ քանի պատրաստի ուղտ ունէին մասամբ ուտելու պաշարով բեռնաւորուած։



մօտ կէս գիշերն էր, որ փոքրիկ կարաւանը ճանապարհ ընկաւ։ Աստղերն այնպէս պայծառ լուսով էին փայլում, որ խեղճ Րոբերտը, երբ աչքերը վեր բարձրացրեց, չկարողացաւ արտասուքները պահել։ Խորին լռութիւն էր տիրում։ Միայն երբեմն բորենիքի ձայնն էր լսվում, որ իր որսն էր որոնում կամ ուրիշ կատաղ կենդանիների մօտ էր գնում, ուր կենդանիների անթաղ լաշի հոտը գրաւում էր— այդ է այդ կենդանիների սիրելի կերակուրը. կամ քաղցած շագալների կերկերեալ (хриплый) հաչոցը։ Բայց այդ հազուագիւտ պատահող ձայներով, գերեզմանական լռութիւնը քիչ էր ընդհատվում, որի մէջ աւազի վերայ լսվում էր իւրաքանչիւր մարդի ոտի ձայնը եւ ուղտանների ոտների շղշղոցը։

Ո՜հ, ի՜նչ կտար Րոբերտը, եթէ իր ընկերների մէջ գտնուէր մի միակ երկրացի, որի հետ կարողանար խօսել։ Բայց այն բոլոր սեւերը, որ թոկով սարսափելի կերպով միացած էին, Տէր Աստուած, թէ Աֆրիկայի ո՞ր կողմիցն էին, նա այդ չգիտէր, բայց ըստ մեծի մասին միմեանց լեզուն չէին հասկանում։ Չէր կարելի ասել, թէ նոքա շատ էին տանջւում, միայն թէ ծանր գնացող ուղտերից յետ չէին մնում. բայց տեղը, որ ճանապարհի տեղ էր ծառայում, անհաւասար եւ քարքարոտ էր, իւրաքանչիւր քայլում մարդի ոտը աւազի մէջն էր խրվում։ Դա

շատ յոգնեցում էր հետևակներին, և Ռոբերտը, շարունակաբար աւելի տեղ մնացած լինելով, վերջապէս վայր ընկաւ, բայց դարձեալ ամրացաւ մինչև վերջին ոյժը, մինչև այն ժամանակ, երբ կամքից և ոյժից ընկաւ: Միւս գերիները աղաղակեցին և կանգնեցին:

Վաճառականները լաւ իմանալով գեղեցիկ սպիտակ ստրուկի գինը, որի համար և թանգ էին վճարել, իջան իրանց ուղտերից և շտապեցին դէպի նա: Քանի մի կաթիլ ջուրը նրան ուշքի բերեց, սակայն նա առաջ գնալ չէր կարող: Նրան ուղտի վերայ նստեցրին և կապեցին, ոչ այնքան ահիցը, որ չը փախչէր, որքան նրա համար, որ վայր չ՚ընկնի. այնպէս թեթև կերպով կապեցին, որ ոչինչ նեղութիւն չէր պատճառում: Սակայն ուղտի տատանելը մանգաղուն սովորած չ՚լինելովն՝ նրա համար տանջանք էր, որ եթէ նրա ոտներն այնպէս սաստիկ չէին ցաւել և ոտերի տակն այնպէս չէր այրուել, նա նախապատիւ կ՚համարէր ոտով մին գալ: Այս տանջանքի հետ միացաւ և թափանցող ցուրտը, լոյսին անհամբեր սպասելը, այդպիսի թեթև շորերում, մանաւանդ շարժումնքից զրկուած լինելը:

Վերջապէս գեղեցիկ արեգակը դուրս եկաւ և լաւ տաքացրեց դողացնող Ռոբերտին: Բայց ախորժելի տաքութիւնը շուտով փոխուեցաւ անտանելի շոքի: Ամենայն տեղ—միայն աւազ. չ՚կար ոչ բոյս,



ոչ աղբիւր, իսկ արեգակը որքան բարձրանում էր, այնքան էլ այրում—խորովում էր: Մինչև անգամ ուղտանները նկատելի կերպով սկսան ուժից տկարանալ:

Յանկարծ երևեցան լեռներ, մինչև գագաթները հովանաւորուած—անտառներով ծածկուած, իսկ այն լեռների ստորոտում լիճը փայլում էր արեգակի ճառագայթների տակ ինչպէս հայելի—և այդ բոլորը այնպէս մօտիկ էր, որ կարծես, եթէ մարդ ձեռքը մեկնէր կը հասնէր: Քիչ մնաց, որ Ռոբերտն ուրախութիւնից աղաղակէր և շատ զարմացաւ, նկատելով որ թէպէտ բոլորը նրանից աւելի էին նեղանում և բոլորեքեանք տեսնում էին գրաւիչ դաշտավայրը, սակայն ոչ ոք նորա ուրախութեանը չէր ընկերանում—մասնակցում: Նա թեթև քաշեց նուբիացու ձեռքին, որն ուղտի սանձը բռնած, քաշում էր, և ցոյց տուեց նրան լեռները և լիճը, բայց նուբիացին անխոութեամբ ժպտաց, ուսերը վեր քաշեց, խունջը ձեռքով վեր բարձրացրեց և վրէն փչեց: Փոստութիւնը պարզ և հասկանալի էր՝ սխալ և դատարկ ցանկութեան: Ռոբերտը երբէք մի հրաշք չէր տեսել և սկզբում նուբիացուն չ՚հաւատաց. բայց երբ կողմնակի նայեց յափշտակիչ պատկերի վերայ, պարզ նկատեց կանաչ լեռաների հիմքի և անապատի մէջ տարածութիւնը, որի վերայ ըստ երևութին հանգստանում էին, և

տեսաւ թէ ինչպէս ամբողջ երեւոյթն սկսեց վեր և վեր բարձրանալ օդի մէջ. և վերջապէս անյայտացաւ, ինչպէս հողմ. և մնաց բոլորովին առաջուայ պէս գեղնագոյն, մեռած, հարթ տարածութիւնը, արճճի գոյն երկինքն իր այրող օդով: Միայն այստեղ նա մտաբերեց, որ ծերունի զինուորներից մէկը, այս բնութեան խաղի մասին շատ էր պատմում և ինքն այն ժամանակ չէր կարողանում իրան ներկայացնել ինչ որ այժմ տեսնում էր իր աչքերով: Խաբուած յուսից գլուխն աւելի տխրութեամբ կորացրեց, վերջին ուրախութիւնը թողեց նրան և նա անձնատուր եղաւ իր անտանելի դրութեան մութ մտածմունքին:

Այս ժամից յետոյ Նուբիացին ձեռքով շարժեց նրան և ուրախ երեսով ձեռքը մեկնեց ուղտանների վերայ, յետոյ ձեռքը մօտեցրեց շրթունքներին, շարժողութիւն արաւ, այնպէս ինչպէս մարդ ջուրէ խմում, և վերջապէս ձեռքն առաջ մեկնեց, սակայն Ռոբերտը նրա արած ձևերից չկարողացաւ ոչինչ զանազանել: Նա սկսեց անդադար ուղտաններին նայել: Վերջապէս տեսաւ, որ նոքա ձգեցին երկար ծուռ վզերը և շտապեցին՝ քթի ծակերը լայն բացած, կարծես կամենում լինէին դէպի իրանց քաղցր հոտ քաշել:

Փաշողները ձեռքերից բաց թողեցին կենդանիները: Անասունները փոքր առ փոքր քայլերն աւե-



լացրին և մի առանձին տեսակ ձայներ էին հանում, ինչպէս շվացնելը: Վերջապէս ուղտանները հարկադրուեցան բոլոր ուժով պահել նրանց, որովհետև այնքան արագ էին սկսում գնալ, որ խեղճ գերիները չէին կարողանում յետևներից հասնել:

Ռոբերտը մեծ համբերութեամբ սպասում էր ուղտերի նախազգուշակ լինելու հաստատութեանը կամ աւելի ճշմարիտ, նրանց սուր հոտոտելիքը, որ ջրի գոլորշիներն այնքան հեռու որ տարածութեան վերայ ներշնչում էին, այնպիսի տարածութեան վերայ աչքը ոչ մի նշանից չէր կարող գուշակել աղբիւրի գոյութեան մասին: Իր փորձից, այս հաստատելու համար շատ չ՚շտապեց՝ հօրիզոնում ծառերի գագաթներ երևեցան, որոնց մէջ, շատ մօտիկ լինելով, ճանաչեց բարձրահասակ և զանազան տեսակ արմաւենիք:

Ամենքին կենդանացրեց մի տեսքով գիւղաքաղաքը, որ նշանակուած էր կարաւանին հանգստարան: Մարդիկն ու կենդանիքը մոռացան իրանց հոգնածութիւնը, իւրաքանչիւրն առաջինն էր կամենում ցանկացած տեղին հասնել: Եթէ քաշողներին ուժով ուղտաններին չպահէին, նոքա մի բոպէում աղբիւրը կ՚հասնէին, որ գտնվում էր խոր տեղ, պղտոր ձահճի մէջ: Ուղտաններին խմացրին, փոքրիկ կաշէայ [illegible], իսկ իրանք երեսների վերայ ընկած,

նոյն իսկ աղբիւրի ակնի մօտ խմելու, և յետոյ արդէն զովացած, կենդանութիւն ստացած, սկսան ուղտանների բեռները վերցնել: Աղբիւրի շուրջը կանաչ ճահիճ կար, ուղտաններին այնտեղ արձակ թողեցին: Յոգնած կենդանիքը պառկեցին կանաչ խոտի վերայ և պառկած սպասում էին: Մարդկերանցից մի քանիսը վրան վեր թողեցին, միւսները փոսեր փորեցին և շուրջը քարեր շարեցին, այնպէս, որ ժամանակաւոր հնոցներ շինեցին կերակուր պատրաստելու համար: Ոմանք էլ փայտ հաւաքեցին բրինձ եփելու համար: Ոչխարի չորացրած միսը շուտով կաթսաներումն եփ էր գալի և ամենքն ուրախութեամբ անդադար ճաշին էին սպասում:

Քաղցը կոտրելով և ուշադրութեամբ շրջակայքը դիտելով համոզուեցան, որ վտանգ չի սպառնում Տուարեկների կամ մի ուրիշ բեդուինների ցեղի յարձակման կողմից, բոլորը ծառերի և վրանների տակ պառկեցին: Այդ ժամանակ խեղճ գերիներն էլ ճաշակեցին այս մեծ բարեշնորհութիւնը իւրեանց դրութեան մէջ—քնեցին, այսինքն է, ներկայ և անցած տանջանքները մոռացութեան տուին, և անհոգ ու հանգիստ էին, իսկ դրանց վերայ տէրերը նայում էին ինչպէս գնած ապրանքի վերայ. և անդադար վազում էին ու անհանգստութեամբ բոլոր կողմերը դիտում—թէ ոչ մի կողմից վտանգ չի սպառնում



արդեօք. իմանալով, որ այդ տեղ անապատումը չեն ընդունվում ոչ իրաւունք, ոչ օրէնք,—բացի ոյժից:

Նուբիացի վաճառականները մտադիր էին մըթանը ճանապարհը շարունակել, այնպէս, որ որքան կարելի է շուտով հասնեին Դարֆուր, ուր նոքա յոյս ունէին ապրանքն օգուտով ծախելու, բայց դրանց խանգարեց բնութեան անսպասելի և սարսափելի զօրութիւնը:

Կէսօրից յետոյ ժամի երեքին բոլորը համարեա միասին զարթեցին ուղտերի ահագին ձայնով—ղռղռոցիցը և ճնշող ուժ չգալով՝ կուրծքն անտանելի ծանրանալուց. «Սամում, սամում,» սարսափած աղաղակեցին վաճառականները և շուտով երեսների վերայ գետնին պառկեցին, որքան կարելի է ամուր կպչելով: Նրանց օրինակին հետևեցին բոլոր գերիները, Ռոբերտը նոյնպէս: Հարաւային կողմից սարսափելի հողմ էր փչում, ինչպէս տաք քուրայից (բովք) և շնչառութիւնը արգելում:

— Այս ի՞նչ բանէ հարցրեց Ռոբերտը բոլորովին յուսահատուած, չգալով միայն, որ չէ կարողանում օդ ներշնչել:

— Սամո՜ւմ է, պատասխանեց Նուբիացին, ո՛նոր նրա ուղտը քաշում էր: Այդ պատասխանից Ռոբերտը ոչինչ չհասկացաւ, բայց աւելի շշափելի պատասխանն այն եղաւ, որ ինքն անձամբ փորձեց: Նա

զգաց սարսափելի տաք հողմ, որ փչում էր հարաւից Սահարայի շոգ անապատի միջով. բոլոր կենդանութիւնը ոչնչացնում էր, այրում, չորացնում էր բոյսերը, մարդոց արիւնը, չորում էր թոքերը, ուղեղը և շնչառութիւնն արգելում էր։ Մինչև անգամ Սամումը Միջերկրական ծովն անցնելով իւր ոյժը չէ կորցնում Իտալիայում, ուր յայտնի է նա սիրոկկո անունով, դարձեալ այրող և խեղդող է, որ քանի մի ժամուայ միջոցում կարող է խաղողի ծառեր ոչնչացնել, և մինչև անգամ այն ժամանակ, երբ թեթև է փչում, բայց այնու ամենայնիւ ճնշում է կրծքի վերայ և արգելում շնչառութիւնը։ Տիրոլումը դարձեալ և մինչև անգամ Շվեյցարական Ալպերումը մեծ վնասներ է պատճառում, ահագին կոյտ սառոյցներ անչափ արագութեամբ հալեցնելով նրան՝ ջրի հետ տանում է անտառներ, տներ, ծառեր է պոկում, ահագին տարածութիւններ ծածկում է սիղով և քարերով, այնպէս որ երբեմն շատ տարիների ընթացքում չեն կարողանում մաքրել։ Սամումը երբեմն քանի մի ժամ շարունակվում է, իսկ երբեմն ընդամենը մի քանի ժամ, բայց ամեն դէպքում մարդու առողջութեանը շատ վնաս է տալիս. և դժբաղդութիւն կ'լինի, եթէ բաց անապատում կարաւանի պատահի։

Այդ ժամանակ սամումը չ'դադարեց մինչև երեկոյ ու մինչև անգամ, մինչև կէս գիշերը բարակ



փչելուց չ'դադարեց։ Միայն մարդիկն ու անասունները պառկեցին որքան կարելի է ասոն աղբիւրից մօտիկ, ազատուելով սաստիկ տանջանքից. իսկ խիտ թփերը մանր աւազի ներգործութիւնից չէին կարողանում մարդոցը պահպանել, որ այնպէս կամայ թէ ակամայ պիտի ներշնչէին աւազը՝ չ'նայելով բոլոր նախազգուշութիւններին։ Այս կերպով բանն այս անգամ համարեա թեթև անցաւ։ Այդ գիշեր տեղից շարժուելու համար մտածելը ոչինչ չ'արժէր. մարդիկն ու կենդանիները թուլացած դրութեան մէջ էին գտնվում։ Վաճառականները բոլորին տաք անկողին տուին, որ պաշտպանուին գիշերուայ ցրտից, որ խեղճն այրող հողմից յետոյ զգալի էր սովորականից աւելի, այնպէս որ մինչև անգամ կարող էր մարդ սառեցնել։

Բաց անապատում սամումը դարձեալ աւելի վտանգներ է սպառնում։ Ուղտերը չէին կամենում գնալ և մնում է միայն տեղ գտնելու բարձր քարերի յետևը կամ փոս տեղերը, որ մասամբ գոնէ պաշտպանուին նորա այրող երեսից։ Յաճախ մանր պտոյտների բաժանուելով, մանր աւազը սիւների նման պտտելով բարձրանում է,—բարձրանում և տանում մինչև այն ժամանակ, երբոր աւազն իր սեպհական ծանրութիւնից թափվում է և ծածկում ամենայն բան ինչ պատահում է։ Այդպէս

շատ անգամ կարելի է տեսնել ամբողջ կարգեր—մինչև տասը քանը—այդպիսի աւազային սիւները բոլորովին նման են ջրային սիւներին (թաւթաւ) որոնցից ծովագնացները փախչում են։ Եթէ այդպիսի քանի մի սիւն միևնոյն ժամանակ և միմեանցից մօտիկ տարածութեան վերայ փչէին—թափուէին կարաւանի վերայ, այն ժամանակ շատ դժուար կլինի կարաւանին նրա տակից դուրս գալ։

Մեր ճանապարհորդների համար մեծ բաղդաւորութիւն էր, որ սամում՝ աղբիւրի մօտ նրանց հասաւ, որտեղ կարող էին ուղտերի համար կերակուր ճարել և կարող էին շուտով ուժերն ուղղել ճանապարհը շարունակելուց առաջ։ Միւս կողմից սամումը նրանց ազատվեցնում էր յարձակմունքից, որովհետև բեդուինների ցեղերը մինչև անգամ իրանց ավազախներումն էին տանջվում նրա անփախչելի հետևանքներից, այնքան որքան և ճանապարհորդները։ Միայն միւս օրն արեգակը մտնելիս փոքրիկ կարաւանը կրկին ճանապարհ ընկաւ, առաջուց տիկերը ջրով լցնելով։

Մինչև հետևեալ աղբիւրը պիտի մեծ վաճառականական կարաւանների ճանապարհովը գնային։ Ճանապարհն անհամեմատ մեծ էր. պէտքէ հանգըստութեան ժամերը կարճէին, որ անջուր անապատում չմնային. ուստի իւրաքանչիւր րոպէ յարձակուելու վտանգը շատանում էր, որովհետև զօրեղ և խիստ



յափշտակող ցեղերը բնակվում էին Սահարայի ափերում և ունէին փորձուած հմուտ լրտեսներ, որոնք կարող էին հմտութեամբ թագնուել անապատի ցրուած քարերի յետևը և իմաց տալ կարաւանի մօտենալը։ Բայց երկիւղ կրելն այս անգամ աւելորդ էր երևում, վաճառականներն իրանց գերիներովն ապահով, թէպէտ և տանջուած—մահուան դուռը հասած՝ աղբիւրի մօտ հասան, սակայն ոչ այնքան առատ և քաղցրահամ, ինչպէս առաջինը։ Չ'նայելով նախազգուշութիւններին ջրի պարկերը երկու օր էր որ դատարկուած էին, անբաղդները երկու օր պիտի համբերէին այրող շոգին, չգովանալով ոչ մի կաթիլ ջրով։ Բայց այդ վերջին նեղութիւններն էր։ Պողատու, անտառոտ կողմերը զգալ էին տալիս իրանց խոնաւ օդովը, յաճախ ճանապարհին աղբիւրներ էին պատահում և ծարաւից մահուան սարսափելի երևոյթն անյայտացնում։

Սակայն Նուբիացիք գիտէին, որ միւս վտանգն էր մեծանում։ Նոքա ցերեկով գնալը դադարեցրին, այլ աշխատում էին իրանց վրաններն աւելի ապահով տեղեր վերթողնել, հարթ տարածութեան մէջ թափառողների աչքերից ծածկելու համար. թէև չկար ոչ մի կաթիլ ջուր և ոչ էլ խոտ. իսկ երբ մթնեց շուտով առանց վերջալուսի, վերկացան աստղերը փայլելու ժամանակ և ճանապարհ ընկան։ Մինչև այս

ժամանակ հանգիստ էին, որովհետև բոլոր նախազգուշութիւնները անում էին, և ոչ մի անգամ նախկածելի բան չը տեսնելով հաւատացած էին որ իրանց ոչ ոք չէր նկատել։ Բայց նոքա սխալւում էին։ Մի փոքր ցեղ, որ Դարֆուրի մօտերքն էր կենում, հեռուից արդէն վաղուց էր հետևում նրանց, բայց դարձեալ չէր վստահանում վրա տալու, որովհետև թուով հազիւ էին գերազանցում, բացի դրան, յարմար ժամանակի էին սպասում։ Անշուշտ պիտի յարմար ժամանակի սպասէին, երբ գերիներն արձակած չէին լինիլ, որովհետև այլապէս յայտնի բան է կ'օգնէին վաճառականներին, որ խնայողութեամբ էին վարվում նրանց հետ և մարդավարի, քան թէ վայրենի բռնութիւնները կ'վարուէին։ Յափշտակողները ջերջապէս մնացին յարձակուելու համար այն րոպէն ընտրել, երբ փոքրիկ կարաւանն աղբիւրին կ'հասնէր և դեռ ևս հանգստացած չէր լինիլ։

Յետևեալ երեկոյեան այդպէս էլ արեցին։ Բեդուինները վրա վազեցին բոլորովին անսպասելի ժամանակ և այնպիսի սարսափելի ձայներով, աղաղակներով, որ Նուբիացիք սխալուեցան իրանց հաշուի մէջ նրանց թուի վերաբերութեամբ և կարծեցին, թէ նոքա իրանցից շատ—շատ են. Ահիցը համարեա չկարողացան պաշտպանուել, որովհետև հետները



ոչ մի հրացան պատրաստ չունէին։ Գերիները գոնէ կը կռուէին նրանց դէմ, բայց դեռ ևս չէին արձակուած, մինչև անգամ չէին կարողացել տանջող ծարաւը կոտրել։ Բեդուիններն իրանց գործն այսպէս վերջացրին՝ երեք Նուբիացուն սպանեցին նիզակներով, մէկ քանիսին սաստիկ վիրաւորեցին, մնացածներին կապոտեցին։ Մնում էր միայն բեռները վայր բերած ուղտերին և կապած գերիներին ջուր տալ, հանգստութիւն տալ, ուտեցնել և քշել որքան կարելի է շուտ իրանց տեղը, որ իրանց մի ուրիշ աւելի ուժեղ ցեղ վերա չհասնէր, որ շատ անգամ էր պատահում։

Դարֆուրի փողոցումը կամ հրապարակումը գերիներ էին կանգնած կարգով՝ ծախելու համար։ Դոքա սևեր էին ըստ մեծի մասին Աֆրիկայի զանազան ծայրերից ժողոված, կային նոյնպէս մի քանի Նուբիացի և մի սպիտակ։ Բոլորի վերայ նշմարվում էին քաշած ծանր նեղութիւնների հետքերը, մանաւանդ խղճալի և ողորմելի դրութեան մէջ էր սպիտակ գերին՝ բոլորովին երիտասարդ հասակի մէջ։ Նորա ոտները վիրաւորուած էին և շատ կարելի է սաստիկ ցաւելիս լինէին, այդ նրա իւրաքանչիւր շարժման ժամանակ երևում էր։ Նրա երեսի գոյնը ոչ բաց տեղին էր, ոչ էլ աղիւսի գոյն, այլ կիզիչ օդից այրուած էր։ Նրա աչքերի մէջ

երեւում էին սարսափելի դրութեան մէջ գտնուելը — մարմնական ուժերի սպառուելը։

Իհարկէ ընթերցողները հասկացան, որ այն Րոբերտն էր, որի մէջ թագնուած էր դառը և տանջող անցեալ՝ եթէ տեւողութեամբ ոչ երկար, սակայն նրա վրայ անջնջելի հետքեր և տպաւորութիւններ էին թողել, այն միջոցին երբ նրա չորս ընկերները համեմատաբար հեշտութեամբ էին տանում բոլոր տանջանքները։ Նա այլ ևս ուժ չունէր ոտի վրայ կանգնելու, այլ մերկ՝ գետնին նստած էր։ Բայց չէին թողում, որ այդ թեթեւութիւնից օգտուի քաղի. քանի մի առնողներ մօտ եկան, ուստի նրա տէր բեդուինը հարկադրեց նրան մտրակելով, որ վէրքերով ծածկուած ոտի վրայ կանգնի։

Մօտ եկող առնողներից մէկը երեւում էր բարի և ցաւակից մարդ, եթէ կարելի էր ողորմութիւն յուսալ վաճառուող մարդկերանց համար, մանաւանդ մէկի համար։ Պարզ երեւում էր, որ նա ոչ Նուբիացի էր և ոչ բեդուին. Նրա երեսի գծագրութիւնը գեղեցիկ էր, իսկ գոյնը մուգ, նա հագած ունէր մի տեսակ լայն՝ շատ ծալքեր ունեցող սպիտակ շոր, իսկ գլխին ծածկած ունէր տաճկական ֆէս, որ գործ է դրվում բոլոր արեւելքում, և ունի այս յատկութիւնները, կարմիր բրդէ գլխարկ կապոյտ երկար փունջով։ Այդ օտարականը լուռ նայում էր



շարուած գերիներին, բայց անդադար դառնում էր Րոբերտի մօտ, նայում էր նրա վրայ ցաւակցութեամբ, և վերջապէս գինը հարցրեց, բեդուինը շատ ուրախացաւ այդ սպիտակ քնքոյշ մարդուն վաճառելով։ Նրա նշանակած գինը, ըստ երեւոյթին, առնողին թանգ չէր երեւում։

Րոբերտը սրտանց աղօթում էր, որ իրան այդ օտարականը ձեռք բերէ, որի երեսը նրա ակամայ հաւատարմութիւնն էր զարթեցնում, և երբոր աճուրդը կայացաւ, գոհութեամբ ձեռքերը միմեանց վերայ դարսեց։

Նրան միայն հանգամանքն էր զմայլեցնում, որ նոր տիրոջն առաւ դարձեալ նոր սևեր, ընտրեց նրանց, որոնք աւելի երիտասարդ և ուժեղ էին, որից կարելի էր եզրակացնել, որ նա էլ վաճառական էր և գերիներին առնում էր, վաճառելու համար։ Իւրաքանչիւր դէպքում երեւում էր որ այդ մարդը կատաղի —բարկացկոտ մարդկերանց նման չէր։

Վաճառականը թուրք էր, ինչպէս յետոյ երեւեցաւ, նախ և առաջ Րոբերտին տարաւ՝ հազիւ ոտները քաշելով մերձակայ բաղանիքը։ Այդ խեղճ երեխայի համար ճշմարիտ բարերարութիւն էր—նա կարծես կենդանացաւ, մանաւանդ նրանից յետոյ, ինչպէս թուրքի հրամայելովը, հմուտ սափրաւերը նրա ոտները փաթաթեց։ Նա ջերմեռանդութեամբ

օրհնում էր իր պաշտօնին, որը նրան քաղցրութեամբ և ժպիտով էր պատասխանում և այնուհետև միշտ նորա վերայ ուշադրութիւն էր դարձնում։ Եւ նա ինչ բաւականութեամբ, համով կերակրով կշտանում էր, ի՜նչ հանգստութեամբ, փափուկ բարձերի վերայ հանգստանում էր, Թուրքի սեպհական հով սենեակում։ Նա զարմացաւ, երբ տէրը չ՚թողեց նրան միւս օրը վերկենալ և հրամայեց պառկել մինչև այն ժամանակ, որ ոտները առողջանան,—սափրաները հմտութիւն ունենալով, շատ շուտով լաւացրեց, քան թէ կ՚յուսար Ռոբերտը։

Երբ բոլորովին ուղղուեց, երբ նրա երեսին թարմ կարմրութիւն եկաւ, Թուրքն սկսաւ ճանապարհ ընկնելու պատրաստութիւն տեսնել, միանալով մի մեծ կարաւանի հետ, որ իւրաքանչիւր տարի այս ժամանակներն Աֆրիկայի միջին երկրներից գալիս էր, որ Եւրոպացիներին այդ ժամանակը ծանօթ էին, դէպի Կայիրէ։ Այդ կարաւանների ժողովուելու կենդրոնը Կայիրէն էր, իսկ գլխաւոր ապրանքը կազմում էին փղոսկրը և սև ծառը, ինչպէս վաճառականները սևերին անուանում էին։ Ուղտերը ձգուեցին երկար և անվերջ երամով միմեանց հետևից։

Դարձեալ Ռոբերտը ճանապարհ ընկաւ անապատի միջով, դարձեալ հանդիպեց նոյն վտանգներին և նեղութիւններին, բայց այս անգամ բաւականի



փոքր չափով և բաւականի լաւ հանգամանքների մէջ, թէպէտ ճանապարհորդութիւնը դեռ ևս շարունակվում էր աւելի երկար քան թէ առաջին անգամ, և կարաւանը շատ ծանր էր առաջ գնում։ Նորա տիրոջ վերաբերուելը դէպի նա միևնոյն էր, նորան տանում էին մի լաւ և հանգիստ ուղտի վերայ և առհասարակ ամենայն կողմով պահպանում և խնամում էին։ Եթէ երիտասարդը մտածում էր, թէ այդ հոգատարութեան գլխաւոր նպատակն է նորան գեղեցկացնել—մաքրել որ յետոյ թանգ ծախուի, և այս բոլոր մտածմունքները՝ նորանից շնորհակալութիւնը չէին պակասացնում, այնպիսի վարուելու համար. և իւր բարի տիրոջը շնորհակալութիւն անելուց չէր դադարում։

Ռոբերտը միայն մի բանի չէր կարողանում ընտելանալ՝ այն է, ուղտի տատանուող վազելուն։ Ամենայն գիշեր նա իրան զգում էր իբր փայտով ծեծած—ջարդած, այնպէս որ ցաւերը շատ ժամանակ չէր կարողանում քնել մինչև մէջ գիշերը։ Այդ անքուն ժամերը նորա համար ամենածանր էին. հոգու մէջ ժողոված յիշողութիւնները, վտանգը, դառը մտքերը, շատ անգամ արտասուքի մէջ էին ձգում։ Քանի մի ժամանակից յետոյ սովորեց և ուղտի վերայ նստելը, և այլ ևս նորա վերայ չէր յոգնում—նեղանում։ Ամենայն մարդ առհասարակ բաւական հեշ-

տութեամբ է ընտելանում իւրաքանչիւր գրութեան հետ, եթէ միայն այդ գրութիւնը չափազանց անտանելի չէ, այդպէս էլ Ռոբերտն եղաւ։ Նա կուշտ էր, արեգակից պաշտպանուած էր բաւականի լաւ շորով և չէր վախում թէ իւր մարմինը կրկին կը ծածկուի ուռոյցքներով՝ ինչպէս կատաղի բեդուինի հետ ճանապարհորդելիս, երբ հին բուրնուսը վերան կտոր կտոր էր լինում, բայց ոչ ոք չէր մտածում ուրիշը տալու։ Իւր տէրը լաւ էր վարվում հետը, և որքան կարողացաւ նկատել՝ միւս գերիների հետ նոյնպէս էր վարվում, և առհասարակ այս կարաւանի մէջ գերիների համար շատ լաւ էր, քանթէ բեդուինների մօտ և մինչև անգամ Տուարէկների մօտ ավազուտում. Ռոբերտը երիտասարդ էր և ինչ նոր բան էր տեսնում հիանում էր, նորան զբաղեցնում էին և այս մարդիկը, որոնց յետևից լուռ ու մունջ գնում էր և դիտողութիւններ անում այս և այն բանի վերայ, և նոյն իսկ բնութիւնը, մանաւանդ այն ժամանակ, երբ անապատի մեռած միակերպութիւնը սկսում էր փոքր առ փոքր կենդանանալ։

Կարաւանը մօտեցաւ Նեղոսի հովտին։ Հրաշալի գետը, Եգիպտոսի կերակրողը, արեգակի տակ փայլում էր. ահագին բուրգերը, կարծես, օտարոտի լեռների ձևեր, հորիզոնի ծայրումը երևել էին սկսում և միանգամից Ռոբերտի հետաքրքիր աչքերն



իրանց վերայ դարձնել տալու։ Նա իւր յետևը դեռ ևս տեսնում էր մեռած անապատը, իսկ առաջը — չքնաղ, պտղաւոր երկիր. ամենայն տեղ արմաւենիների խմբեր, գետի վերայ հարթայատակ (барка) նաւեր, ամեն տեղ գործունէութիւն, կեանք և բաւականութիւն։ Եւ չնայելով, որ այս երկիրը իւր սիրելի Ֆրանսիային չէր նման, բայց այնուամենայնիւ նորան յիշեցրին լաւ մշակած դաշտերը և ամեն տեղ խելացի աշխատանքի յայտնի նշանները։

Իրան հաշիւ չտալով այդ բանում, լուսաւորուած կեանքի մեղմ ձգտողութեանը ենթարկուեց, վայրենի և կիսավայրենի բնակութեանը հակապատկերին, որ՝ մէջ երկար մնաց՝ Ալժիրից հեռանալուց յետոյ։ Այդ զգացմունքն աւելի զօրեղացաւ այն ժամանակ, երբ հեռվում նորանց առաջ երևեցաւ Կայիրէն։ Բարձրահասակ արմաւենիների մէջ մանր դիրքով երևում էին մզկիթների ոսկեզօծ գմբեթները և գեղեցկատես բարձր մինարէթները, և մեծ — մեծ տները։ Այդ բոլորը նորա վերայ հայրենիքի հոտ էր բուրում, չնայելով որ բոլոր շինութիւնների ձևը ամենևին չէր համապատասխանում նրանց, որ նա տեսել էր Սենայի ափին։

Գերեզմանական լռութիւնից և անմարդաբնակ անապատից յետոյ, մարդկերանց մօտ լինելը անչափ ուրախութիւն էր, որտեղ միայն չաղալի անախորժելի

ոռնոցը, բորենիքի հաջոցը կամ ինչպէս Դարֆուրի շրջակայքում՝ առիւծի սարսափելի մռչիւնը, գիշերուայ լռութիւնը խանգարում էին, իսկ ցերեկով միայնութեան զգացողութիւնը մեծ ուժով նորա կուրծքը ճնշում էր:

«Այստեղ ապրող հազարաւոր մարդոց մէջ կ՚գտնուի արդեօ՞ք, մի միակը, որը հասկանայ իմ լեզուն. նորա մէջ այս միտքը ծագեց, ծածուկ յոյսի նման.—արդեօք կ՚ազատուեմ ես անխօս դրութիւնիցը, դարձեալ մարդու հետ խօսելու երկար, երկար տանջող լռութիւնից յետոյ»

Այն քաղցր ժամին, երբ գիշերուայ հովն ընկաւ, երբ Նեղոսից խոնաւ և թեթև հովեր փչում, կարաւանը քաղաքի դռներին մօտեցաւ, և նոր գոյն գզոյն կենդանի ներկայացող պատկերները քաշում էին ցնորքներ մտածող Ռօբերտին. նորա մտքերը իրականութեան — ճշմարտութեան փոխուեցան:

Եթէ այն ծածկը, որի մէջ գիշերով գերիները փակուած էին, չէր ներկայացնում ոչինչ առանձին յարմարութիւններ և ախորժութիւններ, բայց էլի այստեղ հարիւր անգամ լաւ էր, քան թէ Դարֆուրում կամ անապատում վրանների տակ. Ռօբերտը երկար ժամանակից յետոյ առաջին անգամ քաղցր քնեց խսիրի վերայ, համեմատելով Սահարայի աւազէ հետ՝ նորան թագաւորական անկողին երևեցաւ այդ:



Միւս առաւօտ եկաւ նորա տէրը երկու ծառայի հետ, որոնք բերում էին առատ նախաճաշիկ: Նախաճաշիկից յետոյ Ռօբերտին և միւս գերիներին բաղանիք տարան, իսկ այնտեղից հրապարակը, ուր կանգնեցրին բոլոր գերիներին վաճառելու համար:

Շուտով ընդարձակ հրապարակը վաճառողներով և առնողներով լցուեց, ըստ մեծի մասին Եգիպտացիներով, որոնք հարկաւորութիւն ունէին գերիների՝ Նեղոսի ափերին տնկարկութեան համար. հրէաներով և Կայիրոցիներով: Նկատողութիւնը և աճուրդն սկսուեց: Շատ գեղեցիկ և կենդանի տեսարան էր. ժողովրդի խառնուելուց, աղաղակից, վէճերից և կռիւներից Ռօբերտի գլուխը մինչև անգամ պտոյտ էր գալիս: Զարմանալին այն էր, որ սև գերիների վերայ հաւաքուել էին, իսկ Ռօբերտի վերայ, համարեա ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում, նա չէր կասկածում, թէ պատճառը երկիւղն էր, որ որևիցէ պետութեան եւրոպական հիւպատոս կ՚իմանայ, հետևաբար առնողը կարող էր ոչ միայն զրկուել գերիից, այլ և նորա համար վճարած գումարից ևս:

Արդէն կէս օր էր և վաճառականն ժողովուրդն ու հետաքրքիր մարդիկը հրապարակում նշանաւոր կերպով նօսրացան: Ռօբերտին աւելի սարսափ էր տիրում: Նա ափշութեան մէջ ընկաւ և չկարողացաւ այլ ևս ուշադրութիւն դարձնել, թէ իւր շուր-

ջըն ի՞նչ կատարուեց։ Սակայն նորա շրթունքներր կիսաձայն աղօթք արտասանեցին. «Տէր Աստուած մի՛ տալ ինձ տմարդ չարագործ մարդու ձեռքը։»

Ու հեռու նորանից երկու մարդ կամաց միմեանց հետ խօսակցում էին։ Նորանցից մէկը յետ թեքուեց ինչպէս խղճահարուած։

— Ի՞նչ ես կամենում, Փրանսիացի, բացականչեց նա։

Ռոբերտը շատ զարմացաւ, երբ մայրենի լեզուի ձայները լսեց։ Մի րոպէում նա խօսելու ուժիցն ընկաւ և առաջին րոպէին խօսքով չպատասխանեց։ Բայց յետոյ գետնից վեր թռաւ, որի վերայ նստած էր, երեսիցը քրտինքը թափվում էր, նորա շրթունքներն ահով դողով շարժվում էին, աշխատելով մի բան ասել, վերջապէս արտասուքն այն անգամ ուրախութեան արտասուք եղաւ,—առուի պէս թափվում էր աչքերից։

Անծանօթը, որի մէջ Ռոբերտը կարող էր հայրենակից կարծել, չնայելով, որ Եգիպտացիների պէս էր հագած, նա շուտով մօտեցաւ Ռոբերտին, բռնեց ձեռքը և ինքը բաւական մի շփոթուած, շշնջեց։

— Ի՞նչպէս այստեղ ընկար, որդեա՛կ իմ։

Ռոբերտը այնքան ուրախացաւ, որ կարողացաւ իւր դժբաղդութեան կէտերը համառօտ հաղորդել։

— Դու Փարիզեցի ես, շարունակեց ծերունին,



ես այդ ճանաչում եմ քո արտասանութիւնից։ Ես նոյնպէս Փարիզեցի եմ. ո՞րտեղ է քո տէրը։

— Ահա՛ նա, ցածր ձայնով պատասխանեց Ռոբերտը, և ցոյց տուեց վաճառականի վերայ։ Օտարականը դարձաւ դէպի նա։ Խօսակցութիւնը գերիներին առնելու համար շատ երկար շարունակուեցաւ, երբեմն հանգիստ և երբեմն բարկացած եղանակով, որն երբեմն հանում էր սպառնալիքի գնողի կողմից։ Սակայն փոքր առ փոքր հանգստացան և գերիները ծախուեցան։ Ֆրանսիացին իսկոյն պայմանում խօսեցած գումարը վճարեց, որից յետոյ վաճառողը Ռոբերտին մօտեցաւ և քաղաքավարական ձեռով սեղմեց նորա ձեռքը։

— Աստուած բարի տայ նորան, ասաց երիտասարդը,—նա ինձ համար բարի տէր է եղել։

Գնողն էլ, լսելով այդ խօսքերը, որոնց սեղմեց նորա ձեռքը, յետոյ Ռոբերտին տարաւ իւր հետ, և գնաց կանգնեց առաջին մագազինի առաջ, որտեղ պատրաստի շորեր էին վաճառվում։

— Ի հարկէ, դու ազատ ես որդեա՛կ իմ, յայտնեց նորան.—Ֆրանսիացին չի կարող գերի լինել, նա մանաւանդ համաերկրացու մօտ. բայց այս պատառուած շորերով դու չես կարող քո բարեկամիդ տուն մտնել։ Մտի՛ր այս խանութը։

Կէս ժամից յետոյ Ռոբերտը մագազինից դուրս

եկաւ պայծառ կերպարանքով. նա հագած ունէր ոչ հարուստ՝ բայց նոր և եվրոպական ճաշակով գեղեցիկ զգեստ: Մինչև անգամ գեղեցիկ Ֆէսը ծածկում էր նորա շէկ ու խիտ մազերի մի մասը:

Երեսը փայլում էր, իսկ ծերունին գոհութեամբ նայում էր նորա վերայ: Փոքր ինչ գնալով մտան տուն կամ աւելի ուղիղ ասած, մտան բարձր պարսպով շրջապատած բագը, որի խորքում կառուցած էր տունը, կիսաւեր այգում: Ծերունին բռնեց երիտասարդի ձեռքից և տարաւ եւրոպական ձևով շինած տունը, ուր պատահեցաւ մէկ պառաւ կին:

Սիրելի Մագլենա, դարձաւ դէպի նա ծերունին, ես քեզ համար փոքրիկ հայրենակից եմ բերել, Փարիզեցի, որին որ ներկայացնում եմ քեզ, նորան յուսահատուած գտայ ճանապարհի վերայ և գերութիւնից ազատեցի: Ընդունիր սորան բարեկամաբար ինչպէս մի հայրենակցի վայել է:

Տանտիկինն ուրախ-ուրախ ձեռքը մեկնեց Ռոբերտին, երեսն ուրախութիւնից փայլելով:

— Նա մեզ մի բան կ'պատմի, երբ կ'հանգստանայ:

Իհարկէ, այն բոլորը նրանց համար անյայտ էր, երբ այդ ամուսինները թողել էին մայրաքաղաքը: Որքան փոփոխութիւն, որքան անցքեր — մինչև անգամ հեղափոխութիւններ եղել են: Հարց ու փորձ անելը և պատմել տալն արժէր:



Սակայն, նախ քան նորան հարցնելը, Մագլենա, կարծումեմ, որ չի խանգարիլ կերակրելը, մէջ մտաւ տանտէրը:

Աշխոյժ փարիզեցի կինն իսկոյն խոհանոցը վազեց. նրանք սիրով լաւ հիւրասիրեցին, որի համար և ծերունին մշտականից աւելի հեռու գնաց ուտեստ գնելու: Ռոբերտը սովորած լինելով Ալժիրում լաւ կերակուր եփելը, խոնարհութեամբ խնդրեց տան տիրոջից՝ թէ թոյլ կ'տայ արդեօք իւր բարի կնոջն օգնելու: Ծերունին ժպտալով համաձայնութիւն ցոյց տուեց: Փարիզեցի տանտիկինը մեծ շնորհակալութեամբ ընդունեց նորա ծառայութիւնը և շատ ուրախացաւ իւր երիտասարդ օգնիչի արագ գործ կատարելու և մաքրութեան համար: Երբ որ Ռոբերտը սեղանը բաց արաւ և կերակուրները մէջ բերեց, տանտիկինը բոլորովին բարեկամացաւ նորա հետ:

Կէս օրից յետոյ, երբ տանտէրը ծխախոտ էր ծխում, խօսակցութիւնն սկսուեց: Ծերունիները կարծես երիտասարդացան, լսելով անվերջ պատմութիւններ, որոնցով Ռոբերտը կամենում էր նրանց հետաքրքրութեանը բաւականութիւն տալ, և նոքա իրանք էլ յիշում էին իրանց հին պատմութիւնները: Ի միջի այլոց նոքա յիշատակեցին Կլինարի անունը:

— Կլինա՞րը, վեր թռաւ Ռոբերտը, իմ անունը Կլինար է. Ռոբերտ Կլինար:

— Իմ նոյնպէս, ասաց Ծերունին բոլորովին զարմացած:

— Ժակ Կինար, Եգիպտոսի փաշայի մօտ գլխաւոր վերաբոյժ, հեւալով պատասխանեց Ռոբերտը:

— Օ, արմանալի բան, բացականչեց Ծերունին.— Ո՞րտեղից իմ անունն ու կոչումը գիտես:

— Դուք Փարիզն ու Ֆրանսիան թողեցիք, երբ Մեհմէտ-Ալին երիտասարդ ֆրանսիացիներին, մանաւանդ վերաբոյժներին Եգիպտոս կանչեց:

— Այո, այո, այդպէս է: Բայց ասա, թէ Աստուած կ'սիրես, այդ բոլորը որտեղից գիտես, չփոթուեց Ծերունին: Բայց Ռոբերտը հազիւ նորան լսեց:

— Ձեզ մօտ էր եղբայրս, Կոստանդին Կինարը, արհեստով կօշկակա՞ր:

— Բարեկամ, բացականչեց Ծերունին զարմացած.— բացատրիր ինձ . . . . . . . . . . . .

— Սպասեցէք, ընդհատեց նորան Ռոբերտը.— այդ Կինարն ամուսնացած էր . . . . . . . . Մորանի Եղիզէ աղջկայ վերայ . . . . . . .

— Ռոբերտ Մորան այգեպանի, Հելեան դրան վերակացուն էր. նորա վերայ խօսալը վերջացրեց Ռոբերտը և շարունակեց էլի մէկը՝ ձեզ մօտ մի երիտասարդ բարեկամ ունէիք Կոնրադ Օբեր:

— Կա՛ր, կա՛ր, մեզ մօտ Մադլենան.— իմ եղբայրս: Ախ, երանի կարողանայի մի անգամ էլ տեսնել:



— Եւ նորա մօտ սովորում էր: Կոստանդին Կինարը՝ իմ հայրն էր, Եղիզա Մորանն իմ մայրը:

Եւ Ռոբերտ հեկեկալով, հօր եղբօր գիրկն ընկաւ, որն որ արտասուքն աչքերումը նորան պինդ սեղմեց իւր կրծքին:

Իսկ միւս հարցերի և պատասխանների մասին ազգակցական զգացմունքների ծագման մասին, մանրամասն պատմութեան մասին, որոնցով Ռոբերտը իւր բոլոր կեանքը պիտի պատմէր, սկսած իւր ծնողաց մահուանից, որոնց մասին մենք կարող ենք լռել, որովհետև մենք սկզբից քայլ առ քայլ հետևել ենք նորան մինչև նորա Կայիրէ գալը: Բայց մնում էր մեզ քանի մի խօսք այն դրութեան վերայ, որ նա իւր հօրեղբօր տանը բռնեց, և վերջին անցքերի վերայ:

Անորդի ծերերը նոյն իսկ առաջին րոպէից 'ի բոլոր սրտէ կապուեցան քրոջ որդու հետ, որը իւր կողմիցն սկսեց սիրել և յարգել նրանց ինչպէս իսկական հօրը և մօրը: Ծերունի Կինարը, Եգիպտոսումը հաստատուելով, բոլորովին մտադրուած էր իւր կեանքն այդ երկրումն անցկացնել, որ այդպէս հիւրասիրութեամբ տեղ էր տուել իրան, բայց այժմ նորա մէջ սկսեց ցանկութիւն ծագել՝ Ֆրանսիան մի անգամ էլ տեսնելու համար, հայրենի բնակարան Փարիզը—որ մտական ամենայն նշանաւոր խօսակցութեան առարկաներից մէկն էր դառել, զար-

Թեցնելով երիտասարդական քաղցր յիշատակը։

Սկզբում նոքա կարծես չէին կամենում միմեանց յայտնել, և մինչև անգամ իրանք—իրանց, թէ ինչ են նշանակում գաղտնի հոգոցները, որ փոքր առ փոքր յաճախ էր պատահում. մինչև անգամ չէին երևակայում, թէ իրանց մէջ ինչ փոփոխութիւն է պատահում. բայց վերջապէս նոր խօսող զգացմունքը պատահմամբ երևան եկաւ և մտքերը կիսով հետ բացարձակ խօսեց։

— Ճշմարիտ, Տիրուհին միանգամ իւր Մաղլենային հետ եռանդուն խօսակցութեան մէջ,—մենք արդէն ծեր ենք և այստեղ ապրելն այնքան լաւ է, որ նրանից լաւն էլ չի լինիլ. բայց մենք այնպէս էլ ծեր չենք, որ անխելքութիւն լինէր մեր կողմից մեր սիրելի հետ ծովով գնալով դէպի հայրենիք և Հայաստանից դեռ քանի մի ժամանակ երջանիկ կեանք ունենալ այնտեղ։

— Ահ, ժակ դու իմ ամենացանկալի ցնորքը կամեցար կատարել, յուզուած բացականչեց Մաղլենան։

Այդպէս ուրեմն ոչ մի րոպէ չուշացնենք։ Մեր հասակակիցները պէտք է կրկին նկատեն ամէն կառավարութիւնը, թող վաղը չգցենք այն բանն՝ ինչ որ այսօր կարելի է կատարել։

Ամուսինը վերկացաւ և սկսեց սենեակում քայլել։ Նա երկար ժամանակ չէր խօսում, այլ միայն



մտածում էր։ Վերջապէս կնոջ առաջը կանգնեց։

— Մաղլենա, ասաց նա,—քանի մի օր սրանից առաջ Ալի—Բէյն ինձ ասաց.—«Եթէ քո տունը ծախել կամենաս, ինձ վերայ ծախիր» Նորան խոստացայ, որ ամենայն հանգամանքում կաշխատեմ. նա ինձ այնպիսի գումար առաջարկեց, որը միայն մեզ բաւականութիւն կտայ, որ Փարիզում յարմար և լաւ ապրենք։ Նորա հետ համաձայնենք թէ ո՞չ է։ Հենց նոյն իսկ վաղը—խեղճն աշխոյժ պառաւն ուրախացած ասաց։—Միայն թէ գիտես ի՞նչ կայ՝ ռոճիկն ինչ պիտի անել։ Թողնելը չափազանց զգալի զոհաբերութիւն կլինէր։

— Այդ մասին մի՛ անհանգստանալ։ Մեհմէտ—Ալիի հրամանում ասած է, ռոճիկը, որ ինձ է նշանակած իբրև Եգիպտոսի ծառայութեան նուէր, պիտի ամբողջապէս հատուցանուի ինձ մինչև իմ մահը, որտեղ էլ գտնուեմ, այն բանկերի միջնորդութեամբ, որին ես ինքս կնշանակեմ։

— Փառք Աստուծոյ,—ուրախութեամբ բացականչեց Մաղլենան։—Միայն խնդրեմ, ժակ, որ Բոբերտին չասես։ Անսպասելի համբաւով նորան կզարմացնենք։ Ես էլ գիտեմ, թէ նորա սիրտն ինչ է ուզում։

Տիրուհին ժպտալով գլուխը շարժեց—և սորանով գործը վճռած էր, որպէս գի մանր—մունր բաները պատրաստ էին, այդ ևս երկար ժամանակ չէր

պահանջում։ Կինարը նամակով յանձնեց իւր մի բարեկամին Աղէքսանդրայումը, որ բոլոր հարկաւոր պատրաստութիւնը տեսնի և այն ժամանակ միայն Ռոբերտին յայտնեց, որն որ ուրախութիւնից իրան մոռացել էր և ջերմեռանդ կերպով օգնում էր իւր հօրեղբօրը կահկարասիքը ժողովելու և դասաւորելու։

Քանի մի օրից յետոյ մի մեծ հարթայատակ նաւ լողում էր լայն Նեղոսի վերայ դէպի Աղէքսանդրեայ, այս տեղ էին և մեր բարեկամները, որ հէնց միւս օրը շոգենաւը շոգի արձակելով, բաղդաւոր մարդկերանցը տարաւ դէպի հայրենիք։

Նոքա ապահով հասան Մարսէլ և միենոյն շաբաթ գնացին Փարիզ։ Նոքա այնտեղ յարմար տուն վարձեցին և տեղաւորուեցին—կարգաւորուեցին այնպէս, ինչպէս իրանց կատարեալ բաւականութիւնը պահանջում էր։ Վերջապէս ընդհանուրին ուրախութիւն պատճառելու համար, Օբերը դեռ ևս կենդանի էր և հանդիպեց քրոջն ուրախ և բազկատարած, իսկ Կինարի հետ երախտապարտութեան բարեկամութիւնը վերանորոգեց։ Ռոբերտին ներեց փախչելու համար, երբ իմացաւ նորա բոլոր պատմութիւնը։

Բայց միայն բարի խոհարարն էր պակաս այս բարեկամների շրջանում, Ռոբերտն այցելեց նորա գերեզմանին Պէր—Լաշէզա գերեզմանատանը, որ իւր առաջուայ բարեկամից և ուսուցի աբբայիցը հեռու



էր թաղած։ Նա երախտագիտութեամբ զարդարեց երկու գերեզմանը ծաղիկներով, նոյնպէս և իւր ծնողացը, և ցաւում էր, որ չկարողացաւ նոյն տեսակ պարգևով յարգել սիրելի գնդապետի գերեզմանը, որովհետև քաջ զինուորի ոսկրները հանգստանում էին հայրենիքից հեռու անապատի այրող աւազի մէջ, այնտեղ, ուր տուարեկի նիզակը մտաւ խեղճի սիրտը։

Վերջացնելու համար պիտի ասենք, որ Ռոբերտը բարի դռնապան Բենարի կնոջն էլ կենդանի չտեսաւ, բայց միայն նորա որդուն գտնելով ուրախացաւ—իւր հին ընկերին, եռանդոտ մեքենագործին, որ և բաղդաւոր ընտանիքի հայր էր։

Այստեղ մենք վերջացնում ենք Ռոբերտի երիտասարդական ճանապարհորդութեան և արկածքների պատմութիւնը, որն որ հօրեղբօրից և հօրեղբօր կնոջից մինչև նրանց մահը մնալով և ստանալով նրանցից մի նշանաւոր ժառանգութիւն, մեծ մասը գործածեց բարեգործական նպատակով նա մանաւանդ սիրում էր որբերին օգնել։

ՎԵՐՋ

## Ստորագրող անձանց ազգ և անուններ։

### ԹԻՖԼԻՍ.

| | Քանի. Օրինակ. |
|---|---|
| Աղասի Մելիք—Այվազեանց | 1 |
| Օրիորդ Աննա Յարութիւնեանց | 1 |
| Արշակ Յովհաննիսեանց | 2 |
| Արսէն Մ. Սաղաթէլեանց | 1 |
| Արտեմ Տէր—Բարսղեանց | 1 |
| Աւետիս Գուլլակեանց | 1 |
| Օրիորդ Աննա Բաղդասարեանց | 1 |
| Արշակ Դեմուրեանց | 1 |
| Գրիգոր Վարձելեանց | 1 |
| Գրիգոր Մատինեանց (ուսուցիչ) | 2 |
| Գրիգոր Սարումեանց (ուսանող) | 5 |
| Գրիգոր Սկանդարեանց (տիրացու) | 1 |
| Օր. Եղիսաբէթ Ենիկոլոպեանց | 1 |
| Օր. Եղիսաբէթ Թայիրեանց | 2 |
| Օր. Եղիսաբէթ Թարխանեանց | 1 |
| Իսահակ Յարութիւնեանց | 1 |
| Խաչատուր Դիլանեանց | 1 |
| Խաչատուր Գուլլակեանց | 1 |

| | |
|---|---|
| օր. Կատարինէ Ղօնեանց | 1 |
| Հայպատէլեանց | 1 |
| օր. Հռիփսիմէ Աւագեանց | 1 |
| օր. Հռիփսիմէ Մանգակունի | 1 |
| Կարապետ Թէմուրազեանց | 3 |
| Կարապետ Խօջամիրեանց | 2 |
| Սարկաւագ Ղազարոս Յովսէփեանց | 1 |
| Մամիկոն Հասան—Ջալալեանց | 1 |
| օր. Մարիամ Նարիմանեանց | 1 |
| օր. Մարիամ Վարձելեանց | 1 |
| օր. Մարիամ Ասլամազեանց | 1 |
| օր. Մարիամ Տէր—Աբրահամեանց | 1 |
| օր. Մարիամ Թէմուրազեանց | 1 |
| Ն. Աթանասեանց | 2 |
| Նիկողայոս Նարիմանեանց | 1 |
| Արշակ Սպարապետեանց | 1 |
| Յովհաննէս Տէր—Յակոբեանց (էջմ.) | 1 |
| Երիցուհի Նատալիա Մանգագունի | 1 |
| Նիկողայոս Մալեանց | 1 |
| օր Նատալիա Զարգեղեանց | 1 |
| տ. Նուարդ Առաքելեանց | 1 |
| Մովսէս Թումանեանց | 1 |
| Յովհաննէս Մուրադեանց | 1 |
| Յովհաննէս Տէր—Յովսէփեանց | 1 |
| Յարութիւն Քալանթարեանց | 1 |



| | |
|---|---|
| Յովհաննէս Մխիթարեանց (ուսանող) | 1 |
| Յովհաննէս Թարխանեանց (ուսանող) | 1 |
| Նիկողայոս Վարձելեանց | 1 |
| տ. Նինօ Խաչատրեանց | 1 |
| Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանց | 1 |
| Յակոբ Խօջամիրեանց | 1 |
| Աղէքսանդր Խուդավերդեանց | 1 |
| Նիկողայոս Աստուածատրեանց | 1 |
| օր. Շուշանիկ Արարատեանց | 1 |
| օր. Շուշանիկ Մելքումեանց | 1 |
| օր. Շուշանիկ Տէր—Աստուածատրեանց | 1 |
| Պետրոս Սողոմոնեան Տէր—Յակոբեանց | 1 |
| Պետրոս Տէր—Պետրոսեանց | 1 |
| Յակոբ Մեղաւորեանց | 1 |
| Սարգիս Ղազարեան Նազարեանց | 1 |
| Սարգիս Մելքումեանց | 1 |
| Սարիբէգ Յարութիւնեանց | 1 |
| օր. Վարդուհի Գաբինեանց | 1 |
| Աշոտ Թէմուրազեանց | 1 |
| Գրիգոր Յակոբեանց | 1 |
| դպ. Գրիգոր Մաթէոսեանց | 1 |
| Մկրտիչ Տէր—Մարտիրոսեանց | 1 |
| Արտաշէս Մատինեանց | 1 |
| Փարչօ Յարութիւնեանց | 1 |
| Նիկողայոս Աստուածատրեանց | 1 |

Սմբատ Այդանեանց ( . . . . . . . . . 1
Վաղարշակ Բէլուբէգեանց) . . . . . . . . . 1

ԱՇԱԿԵՐՏՔ ՃԵՄԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

Գրիգոր Թառումեանց . . . . . . . . . . . 1
Ենովք Գէօնջեան . . . . . . . . . . . 1
Թադէոս Զաքարեան . . . . . . . . . . 1
Խաչատուր Ղամարեան . . . . . . . . . 1
Թադէոս Տէր Մանուէլեան . . . . . . . . 1
Կարապետ Տէր Մկրտչեան . . . . . . . . 1
Հայրապետ Ստեփանոսեան . . . . . . . . 1
Համբարձում Ստամբօլցեան . . . . . . . . 1
Միքայէլ Տէր—Գաբրիէլեան . . . . . . . . 1
Հմայեակ Խուշպուլեան . . . . . . . . 1
Միսաք Ասիլեան . . . . . . . . . . . 1
Յարութիւն Այվազեան . . . . . . . . 1
Յովհաննէս Առաքելեան . . . . . . . . 1
Յովհաննէս Տուրքախեան . . . . . . . . 1
Պօղոս Սահակեան . . . . . . . . . . 1
Ստեփան Կանայեան . . . . . . . . . . 1
Վահան Շահինեան . . . . . . . . . . 1
Փառնակ . . . . . . . . . . . . . . 1



Պօղոս Տէր—Պօղոսեան . . . . . . . . . . 1
Գալուստ Թումանեան . . . . . . . . . . 1

ԹԵԼԱՒ.

Գէորգ Գէորգեանց . . . . . . . . . . . . 1
Իսահակ Սարգսեանց . . . . . . . . . . . 1
Մովսէս Խիթարեանց . . . . . . . . . . . 1
Միքայէլ Տէր—Բարսղեանց . . . . . . . . . 1
Մելքօ Գոնեանց . . . . . . . . . . . . 1
Մանանիա Կօխտեանց . . . . . . . . . . . 1

Թորոս Տէր—Պօղոսեան . . . . . . . . . . . . 1
Գալուստ Թումանեան . . . . . . . . . . . . 1

ԹԵԼԼԱՐ

Գէորգ Պէտրոսեանց . . . . . . . . . . . . 1
Խաչիկ Առաքելեանց . . . . . . . . . . . . 1
Մովսէս Խիթարեանց . . . . . . . . . . . . 1
Միքայէլ Տէր—Գասպարեանց . . . . . . . . . . 1
Մելքոն Գանեանց . . . . . . . . . . . . 1
Մարտիրոս Աղաթեանց . . . . . . . . . . . . 1

Գին է 30 կոպ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0165890